

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հանրապետականներուն Մղձաւանջը

Անցեալ շաբաթ Ամերիկայի ժողովուրդը ականատես եղաւ իրադարձութեան մը, որ առաջին անգամ տեղի կ'ունենար հարիւր տարիէ ի վեր: Ներկայացուցիչներու Տունը, իր Հանրապետական մեծամասնութեամբ, սկսաւ նոր նստաշրջանը, որպէս օրակարգի առաջին հարց ունենալով նոր խօսնակի ընտրութիւնը: Այս գործընթացը տեղի կ'ունենայ երկու տարին անգամ մը, երբ նոր ընտրուած կամ վերընտրուած գոնկրէ-սականները կը հաւաքուին ընտրելու համար իրենց խօսնակը: Նկատի առնելով որ, Նոյեմբերին կայացած ընտրութիւններուն Հանրապետականները դուրս եկան յաղթական, նորմալ պայմաններու տակ անոնք պէտք է կարողանային առանց մեծ դժուարութեան ընտրելու իրենց կուսակցութեան ղեկավարը: Վերջին հարիւր տարիներուն եղած է այդպէս, սակայն ոչ այս անգամ: Միայն 5 արժեքի առաւելութիւն ունեցող Հանրապետականները բաժնուած էին երկու մասի՝ պահպանողականներ եւ ծայրայեղականներ: Այս վերջինները, թէեւ թիւով 20 հոգի, կարողացան ձայնակցութեան մատնել Քալիֆորնիայէն ընտրուած գոնկրէսական Քելվըն Մաքարթիի ընտրութիւնը, ոչ թէ առաջին քուարկութեան ընթացքին՝ այլ յաջորդական 14 քուարկութիւններուն:

Ամերիկեան հեռատեսիլները չորս օրերու վրայ երկարող այս յաջորդական քուարկութիւնները ցոյց տուին ծայրէ-ծայր սկիզբէն մինչեւ վերջ:

Դեմոկրատները այս քուարկութիւններու ընթացքին միաձայնութեամբ իրենց 212 ձայները տուին Նիւ Եորքէն ընտրուած Հաքիմ ճեֆրիզին, որ կը հանդիսանայ Ամերիկայի պատմութեան առաջին սեւամորթ գոնկրէսականը, որ կը գլխաւորէ երկու գլխաւոր կուսակցութիւններէն մէկը:

Նոր Գոնկրէսէն ներս 222 ձայն ունեցող Հանրապետականներու ղեկավար Մաքարթիին չկարողացաւ ապահովել անհրաժեշտ 218-ը քուները, որոնք կը կազմէն 435 արժեքներէ բաղկացած օրենսդիր մարմինի կէսէն մէկ անդամ:

Այս կացութեան առջեւ Մաքարթի ստիպուած եղաւ երկար բանակցութիւններ վարել 20 ընդդիմախօսներուն հետ, կատարելով մեծ զիջումներ ու անոնց տալով իրաւասութիւններ, որոնց միջոցաւ անոնք պիտի կարողանան իրենց կամքը պարտադրել մնացած 202 գոնկրէսականներուն վրայ: Մաքարթիի զիջում-

Եթէ Տարածաշրջանին Մէջ Մեր Յարաբերութիւնները Զփոխենք, Չենք Կրնար Կառավարել Սպառնալիքները. ՀՀ Վարչապետ

Յունուար 10-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ առանց տարածաշրջանին մէջ Հայաստանի յարաբերութիւնները փոխելու հնարաւոր չէ կառավարել սպառնալիքները, սակայն աւելցուց, որ փաստ չէ, որ միայն Հայաստանի ցանկութիւնը բաւարար է:

Փաշինեան նման դիրքորոշում յայտնեց անդրադառնալով Ատրպէյճանի ու Թուրքիոյ՝ օրերս տեղի ունեցած զօրավարժութիւններուն, Հայաստանի սպառազինութեան համալրման վերաբերեալ հարցերուն:

Վարչապետը ճիշդ չհամարեց հրապարակային քննարկել բանակի սպառազինութեան, համալրման հետ կապուած հարցերը: «Այն, որ մենք անվտանգային ոլորտում ունենք շատ լուրջ խնդիրներ, փաստ է, որը հնարաւոր չէ ժխտել: Բայց, այն, որ մենք ամէն ինչ անում ենք այդ խնդիրները լուծելու համար, դա էլ ակնյայտ է դառնում գոնէ այն թիւերից, որ կարելի է հրապարակային տեսնել պետական պիւտճէում՝ թէ՛ 2022-ի կատարողանում, թէ՛ 2023-ի ծրագրաւորուածում», ըսաւ Փաշինեան:

Ան շեշտեց, որ Զինուած Ուժերուն մարտունակութիւնը շատ



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան կը պատասխանէ մամուլի ասուլիսին ներկայ եղող լրագրողներու հարցերուն

կարեւոր է, առանց մարտունակ բանակի խաղաղութիւն հնարաւոր չէ, սակայն միայն մարտունակ բանակով եւս խաղաղութիւն հնարաւոր չէ:

«Որեւէ մէկը չի կարող ժխտել, որ խաղաղութեան օրակարգն անհրաժեշտութիւն է Հայաստանի համար եւ ընդհանուր առմամբ: Որեւէ իրադարձութիւն մեզ պէտք է չեղի այդ անհրաժեշտութիւնից եւ տեսլականից: Զօրավարժութիւնները, ռազմական բնոյթի սաղ-

րանքները նաեւ ինչ նպատակ կարող են ունենալ. խաղաղութեան օրակարգը շինծու հռչակելու, օրակարգից հանելու նպատակ կարող են ունենալ: Բայց այն, որ Ատրպէյճանը շարունակում է Հայաստանի նկատմամբ յարձակողական քաղաքականութիւնն ակնյայտ է: Երբ մենք խօսում ենք Լեռնային Ղարաբաղի մասին, Ատրպէյճանը դա ընկալում է ոտնձգութիւն իր տա-

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը Կոչ Կ'ընէ Միջազգային Կառոյցներուն Չանքեր Գործադրելու Ստեփանակերտի Օդակայանի Գործարկման Ուղղութեամբ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդը յայտարարութիւն տարածած է Լազինի միջանցքի շրջափակման վերաբերեալ, որուն մէջ կը նշուի, որ անյապաղ ջանքեր անհրաժեշտ են Ստեփանակերտի օդակայանի գործարկման ուղղութեամբ՝ օդային ճանապարհով մարդասիրական աջակցութիւն հասցնելու նպատակով:

Յայտարարութիւնը ամբողջութեամբ՝ ստորեւ.

«Դեռեւս 2022թ. Դեկտեմբերի 12-ից Ատրպէյճանի կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ամբողջական շրջափակումը, որը կոպտօրէն խախտում է Լազինի միջանցքի՝ 2020թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեամբ ամբողջութեամբ կարգը եւ արգելափակում է Լեռնային Ղարաբաղը Հայաստանին եւ աշխարհին կապող կենսափոխանակման սպառնալիք է ստեղծել այնտեղ ապրող շուրջ 120.000 հայերի համար: Սրանով Ատրպէյճանն առնուազն բռնի տեղահանութեան հիմքեր է ստեղծում, դրանով



իսկ վարելով ցեղային զտումների յստակ քաղաքականութիւն:

Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը պատանդ է մնացել մի երկրի ձեռքում, որը չնայած ձգտում է մօտ լինել Եւրոպային, սակայն այսօրինակ իր գործողութիւններով կոպտօրէն ոտնահարում եւ արհամարհում է համամարդկային քաղաքակրթական արժէքները:

Լազինի միջանցքի երկարա-

Արարատ Միրզոյեան Հեռախօսազրոյց Ունեցած է ԱՄՆ Պետական Քարտուղարի Տեղակալ Քերըն Տոնֆրիտի Հետ

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան հեռախօսազրոյց ունեցած է ԱՄՆ պետական քարտուղարի եւրոպական եւ եւրասիական հարցերով տեղակալ Քերըն Տոնֆրիտի հետ:

Արարատ Միրզոյեան իր գրուցակցին ներկայացուցած է 2022 թուականի Դեկտեմբեր 12-էն Ատրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին եւ արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհի՝ Լազինի միջանցքի արգելափակման հետեւանքով օրէ օր վատթարացող մարդասիրական իրավիճակը: Շեշտուած է, որ Ատրպէյճանը իր գործողութիւններով կոպտօրէն կը խախտէ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութիւնը:

Հայկական կողմը նշած է, որ Լազինի միջանցքի արգելափակ-

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՌԴ Խաղաղապահը Դարձել է Ոչ Թե Արցախի Անվտանգութեան, Այլ Հունանիտար Աղէտի «Երաշխաւորն» Ու Խրախուսողը

ԵԼԵՆԱ ԱԶԱՏԵԱՍ

Մէկ տարի առաջ Յունուարի այս օրերին Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը հարցազրոյց էր տուել իր երկրի ԶԼՄ-ներին եւ նախագրուչական մի շարք յայտարարութիւններ արել, որոնք իրականութիւն են դարձել Լաչինի միջանցքում տեղի ունեցող զարգացումների տեսքով: Պաքուի բռնակալը չի շեղվել հարցազրոյցում որոշակի փակագծեր էր բացել Ատրպէյճան-խաղաղապահ զորակազմ յարաբերութիւնների, այդ շարքերում թիւններում տիրող մթնոլորտի մասին, ինչից կարելի է եզրակացնել, որ չի շեղվել զօրակազմը խաղաղապահութիւն է իրականացնում ոչ թէ անմիջականօրէն ՌԴ-ի, այլ Ալիեւի կողմից հրահանգներ ստանալով, ենթակաջ եւ հաշուետու է ոչ թէ Փուլիինի եւ կամ միայն Փուլիինին, այլ նախ Ալիեւին՝ անտեսելով խաղաղապահ առաքելութեան՝ չէզոք, անկողմնակալ լինելու պարտադիր կանոնը: Ատրպէյճանի նախագահը մասնաւորապէս նշել էր, թէ Ղարաբաղում ռուս խաղաղապահներն իրականացնում են «դրական գործառնոյթ», թէ եւ նրանց գործողութիւններում կան ներդրումներ ոչ պահանջ: Պաքուի բռնակալը դեռ մէկ տարի առաջ էր յօստատացել, թէ Լաչինի միջանցքը ոչ թէ խաղաղապահների, այլ իրենց վերահսկողութեան տակ է. «մենք կարող ենք այստեղ կանգնեցնել ցանկացած մեքենայ, եւ ոչ ոք մեզ ոչինչ չի կարող ասել»:

Հաշուի առնելով այն, ինչ Դեկտեմբերի 12-ից սկսած կատարում է չի շեղվել միջանցքում, կարելի է ենթադրել, որ յայտարարութեան կողմերից երկուսը՝ ՌԴ-ն եւ Ատրպէյճանը, գործում են փոխհամաձայնեցումով. մէկն ամէն

ինչ անում է՝ իր «վերահսկողութեան տակ գտնուող» միջանցքը շրջափակելու համար, միւսն էլ, որը կոչուած է երաշխաւորելու այդ միջանցքի անխափան ու անվտանգ լինելը, ամէն ինչ անում է, որպէսզի «չնյարդաջնացնի» միւս կողմին՝ դառնալով արցախահայութեան ոչ թէ անվտանգութեան, այլ վերջինիս սպառնացող հումանիտար աղէտի «երաշխաւորն» ու խրախուսողը:

Ալիեւը նշել էր նաեւ, թէ Պաքուն բազմիցս դիմել է ռուսական կողմին «խաղաղապահների վերահսկողութեան տակ գտնուող ատրպէյճանական տարածքներ ապօրինի այցերի վերաբերեալ»: «Մենք մէկ անգամ չէ, որ պաշտօնապէս դժգոհութիւն ենք յայտնել անօրինական այցերի վերաբերեալ: Մեր պաշտպանութեան նախարարը մէկ անգամ չէ, որ նամակներ է ուղարկել իր ռուս գործընկերոջը, ինչպէս նաեւ դժգոհութիւն է յայտնել խաղաղապահ առաքելութեան դեկավարին», - նշել էր Ալիեւը՝ յաւելելով. «Մենք յստակ գիտենք, թէ ինչ է կատարում Ղարաբաղ մուտքի եւ ելքի մօտ: Ղարաբաղ մտնող ակտիւմեքենաների 91%-ը չի ստուգւում ռուս խաղաղապահների կողմից: Մենք գիտենք մեքենաների ու մարդկանց թիւը, գիտենք, թէ քանի մարդ է մտել կամ դուրս եկել, մեր տուեալներով՝ պատերազմի ժամանակ այս տարածքները լքածներից 38 հազարը վերադարձել է, իսկ 11 հազարը ընդմիջտ հեռացել է այդ վայրերից: Նշուած տուեալներով՝ ներկայումս ռուս խաղաղապահների վերահսկողութեան գոտում բնակուում է 27 հազար մարդ»:

Ալիեւի ներկայացրած տուեալները՝ Արցախում ապրող քաղաքացիների թուի վերաբերեալ,

ակնյայտօրէն կեղծ են: Նա իր խամաճիկ բնապահպաններին Լաչին գործուղելով ու 29 օր միջանցքը փակ պահելով երեւի կարծում է, թէ իր նշած 27 հազար արցախացիների հարցերն էլ կարելի է լուծել միջնադարեան կանոններով՝ պաշարելով ու հումանիտար աղէտի առաջ կանգնեցնելով՝ իրագործելու իր «Արցախի առանց հայերի» գերնպատակը:

Լաչինի միջանցքի շուրջ ստեղծուած ճգնաժամի պատճառները գնահատելիս պէտք է հաշուի առնել առաջին հերթին իրաւաքաղաքական այն հիմքը, համաձայն որի էլ՝ ՌԴ-ն իր ռազմական ներկայութիւնն է հաստատել Արցախում: Այդ հիմքը, ինչպէս նշուեց, Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնն է, որով խաղաղապահ զօրակազմն ունի պատասխանատուութեան սահմանուած գոտի (որը արձանագրուած է նաեւ ՌԴ ՊՆ-ի կայքում գետեղուած պաշտօնական քարտեզում), սակայն չունի լիարժէքօրէն՝ երկկողմանիօրէն ստորագրուած մանդատ. այդ մանդատը հակամարտութեան կողմերից միայն մէկն է հաստատել՝ ՀՀ-ն, իսկ միւս կողմը՝ Ատրպէյճանը, ինչպէս բազմիցս է նշուել՝ ոչ: Այդ երկիրը մինչեւ օրս հրաժարուած է, ինչպէս ասում են՝ «պրիզնատ գալ» ռուսների խաղաղապահ ներկայութիւնն Արցախում, ինչը նշանակում է, որ զօրակազմի տեղակալումն իր պատասխանատուութեան գոտում, կարելի է ասել՝ լեգիտիմ չէ, քանի որ չի ճանաչուում «չահառուներին» մէկի՝ Ատրպէյճանի կողմից: Ալիեւի ճիշտ՝ ճանաչուած է այն քանով, որ քանով որ այն բխում է ռուս-ատրպէյճանական շահերից, եւ կտրականապէս չի ճանաչուում այն ղէպքերում, երբ առնչուում է հայկական երկու հանրապետու-

թիւնների շահերին եւ մասնաւորապէս Արցախի անվտանգութեանը, ՀՀ-Արցախ կապին:

Ի դէպ, 44-օրեայ պատերազմի ողջ ընթացքում պաշտօնական եւ ոչ պաշտօնական մակարդակներում քննարկուում էր խաղաղապահների թեման, պատերազմի մասնաւորապէս վերջին շաբաթներին առաջարկ հնչեց Արցախում մասնաւորապէս սկանդինաւեան խաղաղապահ զօրակազմ տեղակայելու մասին: ԱՄՆ նախագահի՝ ազգային անվտանգութեան հարցերով խորհրդական Ռոբերտ ՕՊրայցերը մասնաւորապէս նշել էր, թէ հակամարտութեան գոտում ցանկացած զինուած խաղաղապահ ուժ չպէտք է ներառի ներկայացուցիչներ Միսսիսիպի իւմբի համանախագահ երկրներին, ինչպէս նաեւ հարեւան պետութիւններից: Արձագանքելով ԱՄՆ առաջարկին՝ ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Անդրեյ Ռուդենկոն նշել էր, թէ այդ առաջարկը պէտք է համաձայնեցուի հակամարտութեան կողմերի հետ: «Պէտք է ամերիկացիներից հարցնել՝ որտեղից են վերցրել այդ առաջարկներն ու գաղափարները: Բոլոր հնարաւոր մեխանիզմների անհրաժեշտ պարամետրերը պէտք է համաձայնեցուեն հակամարտութեան կողմերի հետ խորհրդակցութիւնների միջոցով», - ասել էր ռուս պաշտօնական, որի երկրի զօրակազմը, փաստօրէն, ինքզինքն օժտեց միանախաղաղութիւն իրականացնելու մանդատով:

« Civic.am »

Արարատ Միրզոյեան Զեռախօսազրոյց Ունեցած է Ստալտու-Քուլոն

ՅԱԿՈՔ ԲԱՂԱԵԱՆ

Արցախի պետնախարար Ռուբէն Վարդանեանը յայտարարել է, որ Արցախի կառավարութիւնում տեղի են ունենում լուրջ փոփոխութիւններ: Այդ մասին նա գրել է Արցախի անվտանգութեան խորհրդի քարտուղար Վիտալի Բալասանեանի հրաժարականից յետոյ, որի մասին յայտնի դարձաւ Յունուարի 7-ին:

Վիտալի Բալասանեանի փոխարէն Արցախի ԱՆ քարտուղար է նշանակուել գեներալ-մայոր Արարատ Մեւքումեանը: «Նոր ժամանակները պահանջում են իշխանութեան համախմբում: Եւ կառավարութեանը գոլգահեռ անվտանգութեան խորհրդի ձեւաչափը դադարել է իրեն արդարացինը», - գրել է Վարդանեանը, դրանով բաւականին թափանցիկ ակնարկելով, որ Վիտալի Բալասանեանի հրաժարականը ըստ էութեան տեղի է ունենում Արցախում այսպէս ասած միաբեւեռ իշխանութեան ձեւաւորման տրամաբանութեան շրջանակում:

Այն, որ պատերազմից յետոյ Արցախում իշխանութիւնն ակնյայտօրէն բազմաբեւեռ էր, թերեւս նկատելի էր անգնի աչքով: Թէեւ, մինչ պատերազմն էլ Արցախի ըստ էութեան չի ունեցել միաբեւեռ

իշխանութիւն: Դրա վառ վկայութիւնն էր 2015 թուականի խորհրդարանի ընտրութիւնը, որից յետոյ տեւական ժամանակ Արցախում չէին կարողանում «բաժանել» ձայները եւ խորհրդարանական ընդամէնը երեք տասնեակի հասնող մանդատները, տեւական ժամանակ քննարկումներ էին տեղի ունենում անմիջականօրէն ներարցախեան եւ Հայաստանի կառավարող համակարգի ներկայացուցիչների մասնակցութեամբ եւ այդ քննարկումների համար Արցախում էր անգամ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը, ինչպէս նաեւ այդ ժամանակ յատուկ յանձնարարութիւնների դեսպան Արկադի Ղուկասեանը: Թէ ինչպէս եւ «ուժով» էր ներկայացուած այդ քննարկումներում Սերժ Սարգսեանը՝ այլ հարց է: Միեւնոյն ժամանակ, տարօրինակ էլ չէ, որ Արցախում իշխանութիւնը միշտ եղել է այսպէս ասած բազմաբեւեռ կամ բազմաթեւ, կամ հնարաւոր է ասել նոյնիսկ, որ ըստ էութեան Արցախի կառավարման համակարգի բաժնետէրերը:

Բանն այն է, որ արցախեան համակարգը Հայաստանի կառավարող համակարգի կից գործող միաւոր էր եւ ըստ էութեան իր վրայ կրում էր Հայաստանի կառավարող համակարգի ստատու-

քուտն: Մեծ հաշուով այդպէս էր նաեւ այն բանից յետոյ, երբ այդ համակարգը 2018-ին հեռացաւ իշխանութիւնից:

Փոխուեց գուցէ այն, որ Արցախում աւելացաւ Հայաստանի նոր իշխանութեան, մասնաւորապէս վարչապետ Փաշինեանի գործօնը, ազդեցութեան իր «բաժնեմասով», իհարկէ ամենեւին ոչ այն աստիճանի, ինչպիսին Հայաստանում էր: Այդ առումով, Արցախում իշխանութեան կամ կառավարման համակարգի տրամաբանութիւնն այլ չէր նաեւ 44-օրեայ պատերազմից յետոյ: Պարզապէս, հասկանալի պատճառներով բաւականին սուր էր ճգնաժամը եւ ներքին յարաբերութիւնների բնոյթը: Իսկ դա բնականաբար չէր կարող լինել էֆեկտիւ կառավարման գործօն:

Ռուբէն Վարդանեանի մուտքն Արցախ ըստ էութեան նոր «բաժնետիրոջ» մուտք էր, սակայն դատելով դրան յաջորդող իրողութիւնների տրամաբանութիւնից, Վարդանեանը փորձում է վերցնել «հսկիչ փաթեթը»: Պէտք է նկատել, որ գոտու ռացիոնալութեան առումով դա թերեւս տրամաբանական ու պահանջուած քայլ է, այն իմաստով, որ փոքրաթիւ Արցախի կառավարման համակարգը չի կա-



ՄԱՍԻՍ
ՇԱՐԱԹ ԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Շար.ը էջ 15

ԼՈՒՐԵՐ

ՀՀ Պաշտպանութեան Նախարարութիւնը Կը Քննարկէ Կանանց Ձիւնուորական Ծառայութիւն Անցընելու Հնարաւորութիւն Տալու Հարցը



ՀՀ Պաշտպանութեան Նախարարութիւնը կը քննարկէ ՀՀ իգական սեռի քաղաքացիներուն կամաւոր ժամկէտային զինուորական ծառայութեան անցընելու հնարաւորութիւն ընձեռելու հարցը: «Արմենիա»-ի հետ զրոյցին այս մասին յայտնեց ՀՀ պաշտպանութեան նախարարի մամուլի քարտուղար Արամ Թորոսեանը՝ մեկնաբանելով ընկերային ցանցերուն մէջ տարածուող լուրերը, որ Պաշտպանութեան Նախարարութիւնը կը քննարկէ

կանանց կամաւոր ժամկէտային զինուորական ծառայութիւն անցընելու հնարաւորութիւն ընձեռելու հարցը: «Յաւելեալ որեւէ տեղեկութիւն այս պահին չեմ կարող յայտնել, միայն կարող եմ հաստատել, որ ՀՀ իգական սեռի քաղաքացիներին կամաւոր ժամկէտային զինուորական ծառայութեան անցընելու հնարաւորութիւն ընձեռելու հարց քննարկուած է», ըսաւ Թորոսեան:

Արցախի Կառավարութիւնը Որոշած Է Անցնիլ Կտրօնային Համակարգի

Առաջին անհրաժեշտութեան անդամները եւ որոշ ապրանքներու բաշխման համար Արցախի կառավարութիւնը որոշած է անցնիլ կտրօնային համակարգի, «Ազատութեան» հետ զրոյցին յայտնեց պետական նախարար Ռուբէն Վարդանեանի խորհրդական Նարինէ Աղաբալեանը: Պաշտօնէսին խօսքով՝ կտրօնային համակարգի անհրաժեշտութիւնը յառաջացած է, քանի որ պահեստային պաշարէն խանութներ մատակարարուող մթերքը քաղաքացիներէն ոչ-բոլորը կրնան ձեռք բերել:



Արցախի պետական նախարար Ռուբէն Վարդանեան

Վիակուժը Արցախ հարիւրաւոր թոներով անդամները ու այլ ապրանքներ կը մատակարարուէին: «Շարունակելու ենք հոգալ մեր բնակչութեանը պարէնով, անհրաժեշտ անդամներ քով ապահովելու խնդիրները: Ուզում եմ նաեւ հաղորդել, որ մարդկանց հետ հանդիպումներում մենք տեսնում ենք, թէ ինչքան վճռական են նրանք տրամադրուած եւ պատրաստ են անգամ այդ պարէնի դժուարութիւնները կրել, բայց վճռական են տրամադրուած իրենց հայրենիքում ազատ ապրելու իրաւունքի համար պայքարելու հարցում», ընդգծեց արցախցի պաշտօնէսին:

Նախնական Տուեալներով 2022 Թուականին ՀՀ-ն Ունեցած Է 1,67 Միլիոն Զբօսաշրջիկ

ՀՀ Զբօսաշրջային կոմիտէն ներկայացուցած է 2022 թուականի Յունուար-Դեկտեմբեր ամիսներուն դէպի Հայաստան զբօսաշրջային այցելութիւնները: 2022 թուականի Դեկտեմբերին Հայաստան եկած զբօսաշրջիկներուն թիւը կազմած է 130 հազար մարդ, ինչ որ կը գերազանցէ 2021 թուականի նոյն ամսուան ցուցանիշը՝ 67 հազար մարդ: Այս տարի երկրորդ անգամ ՀՀ-ն գերազանցեց 2019 թուականի այցելութիւնները ամսուայ կտրուած քով՝ արձանագրելով 130,429 այցելութիւն (2019 թուականի Դեկտեմբերին՝ 110,685 այցելութիւն): Նախնական տուեալներով՝ 2022 թուականին ՀՀ-ն ունեցած է 1,67 միլիոն զբօսաշրջիկ:

Վահէ Ղազարեանը Նշանակուած Է Ներքին գործերու Նախարար

Հայաստանի նախագահը հրամանագրեր ստորագրած է ոստիկանապետի ժամանակաւոր պաշտօնակատար Վահէ Ղազարեանը զբաղեցուցած պաշտօնէն ազատելու եւ ներքին գործերու նախարար նշանակելու մասին: Ազգային ժողովը 2022 թուականի Դեկտեմբերին արտահերթ նիստով, 67 կողմ եւ 6 դէմ ձայնով, ընդունեց Ներքին գործերու Նախարարութիւն ստեղծելու վերաբերեալ օրէնսդրական փաթեթը: Ներքին գործերու Նախարարութիւն եղած է նաեւ 90-ականներուն, Ոստիկանութիւն դարձաւ



Ներքին գործերու նորանշանակ նախարար՝ Վահէ Ղազարեան Ռուբէն Գոչարեանի օրօք 2002 թուականին:

Նաւասարդ Արք. Կճոյեանը Հրահրուած Է Ապօրինի Ծագում Ունեցող Գոյքի Բռնագանձման Գործերով Վարչութիւն

Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նաւասարդ (Սամուէլ) Կճոյեանը հրահրուած է Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւն: Այս մասին տեղեկացուցած է «Ազդարար» հրատարակչին ծանուցումներու հարթակը: ՀՀ Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութեան մէջ Կճոյեանին պատկանող գոյքի առնչութեամբ կ'իրականացուի ուսումնասիրութիւն, որու բերումով կազմուած է ամփոփագիր: Ծանուցագիրը ստանալու պահէն Կճոյեանը մէկ ամսուան ընթացքին պէտք է ներկայանայ ՀՀ Գլխաւոր Դատախազութեան ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւն,



Արարատեան թեմի առաջնորդ, Նաւասարդ Արք. Կճոյեան ծանօթանալու գործի նիւթերուն, ներկայացնելու դիրքորոշում, ինչպէս նաեւ յայտարարագիր:

Թուրքիան Հայաստանի Հետ Սահմանին Ռազմակայան Կը Կառուցէ

Թուրքիան Հայաստանի հետ սահմանին՝ Արարատ լեռան վրայ մոտոլային ռազմակայան կը կառուցէ: Այս մասին կը յայտնեն թրքական լրատուամիջոցները: Ծովի մակերեսէն 2100 մետր բարձրութեան վրայ գտնուող ռազմակայանը յազմեցած պիտի ըլլայ գիշերային տեսանելիութեան տեսախցիկներու ժամանակակից համակարգերով եւ ինքնակառավարուող գէնքերով:



Կը նշուի, որ ռազմակայանը թուրքիան կը կառուցէ «ահաբեկչութեան դէմ պայքարելու համար»:

Անհրաժեշտ Է, Որ Միջազգային Կառոյցները Յստակ Պատժամիջոցներ Կիրառեն Ատրպէյճանի Նկատմամբ. Դաւիթ Բաբայեան

Արցախի մէջ մարդասիրական ճգնաժամը կանխելու համար դատապարտող յայտարարութիւններէն զատ, անհրաժեշտ է, որ միջազգային կառոյցները յստակ պատժամիջոցներ կիրառեն Ատրպէյճանի նկատմամբ: Այս մասին Ֆէյսպուքի իր էջով գրած է Արցախի Հանրապետութեան արտաքին գործերու նախարարի պաշտօնակատար Դաւիթ Բաբայեանը: «Սա ոչ այլ ինչ է, քան մարտահրաւէր քաղաքակիրթ աշխարհին: Որովհետեւ մի ողջ ժողովուրդ սովամահ է լինում: Ուրիշ երկրներում պարտւած են, Ձմեռ պապից ինչ-որ ակնկալիքներ են սպասում երեխաները: Մեր երեխաներն էլ հաց չունեն ուտելու, սոված են», գրած է Բաբայեանը:

ԼՈՒՐԵՐ

Պապիկեան Յայտնած Է ՊՆ-ի Պատրաստականութիւնը՝ Աջակցելու ԵՄ Նոր Դիտորդական Առաքելութեան



ՀՀ պաշտպանութեան Գախարար Սուրէն Պապիկեան կ'ընդունի Եւրոմիութեան տեխնիկական գնահատման առաքելութիւնը՝ Մարչին Վիտորայի գլխավորութեամբ

ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան ընդունած է Եւրոմիութեան տեխնիկական գնահատման առաքելութիւնը՝ Մարչին Վիտորայի գլխավորութեամբ:

Հանդիպման ընթացքին ամփոփուած է Դեկտեմբերին աւարտած առաքելութեան գործունէութիւնը՝ յոյս յայտնելով, որ այն արդիւնաւէտ կը շարունակուի նաեւ նոր առաքելութեան գործունէութեան ընթացքին:

ԵՄ նոր առաքելութեան մասին Եւրոպական Միութեան արտաքին յարաբերութիւններու հարցով գլխավոր յանձնակատար Ժոզեփ Պորէլ յայտարարած էր՝ նշելով, որ Միութիւնը Հարաւային Կովկասի մէջ իր ներգրաւուածութեան նոր փուլ կը սկսի՝ նոր, անցումային խումբով, որ հիմքեր պիտի ստեղծէ Հայաստանի մէջ հնարաւոր աւելի երկար ժամկէտով ԵՄ առաքելութեան տեղակայման համար: Ան ընդգծած էր, որ այդ առաքելութեան նպատակն է ի վերջոյ նպաստել կողմերուն միջեւ

վստահութեան ամրապնդման:

Օրերս արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը եւս ընդունած էր պատուիրակութիւնը:

Պատուիրակութեան հետ հանդիպման ընթացքին Սուրէն Պապիկեան ներկայացուցած է նաեւ տարածաշրջանային վերջին զարգացումները, մասնաւորապէս Ատրպէյճանի կողմէ Դեկտեմբեր 12-էն Լաչինի միջանցքին փակումը եւ անոր հետեւանքով ի յայտ եկած մարզասիրական լուրջ մարտահրաւէրները:

Պաշտպանութեան նախարարը բարձր գնահատած է ԵՄ ներգրաւուածութիւնը տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման գործին մէջ՝ յատկապէս կարեւորելով դիտորդական առաքելութիւններուն դերը, եւ յայտնած է Պաշտպանութեան նախարարութեան պատրաստակամութիւնը շարունակելու բոլոր միջոցներով աջակցելու ԵՄ նոր դիտորդական առաքելութեան:

Հայաստանը Հետաքրքրուած Է Հնդկաստանի Փորձով Իր «Սու 30»-ներուն Համար



Ռուսիայէն Հայաստանի ձեռք բերած «սպիտակ փիղ» կոչուած «Սու-30» ինքնաթիռները 2020 թուականին Լեւոնային Ղարաբաղի մէջ պատերազմի ժամանակ օդ չբարձրացուեցան, իսկ Ատրպէյճանը իր «SU-25» ինքնաթիռներու եւ «պայրաքթար» ԱԹՄ-ներու միաջողով կրցաւ աւերածութիւններ յառաջացնել Հայաստանի ՀՕՊ տեղամասերուն եւ ցամաքային զորքերուն մէջ կը գրէ հնդկական «Indian Defence Research Wing» հարթակը:

Կը նշուի, ՀՀ ՌՕՌԻ-ն կտրուկ քննադատութեան ենթարկուեցաւ

ու պատճառներէն մէկը այն էր, որ հայ օդաչուները բաւականաչափ մարզուած չէին, եւ Հայաստանը չէր կրցած հրթիռներ ձեռք բերել Լեւոնային Ղարաբաղի պատերազմէն առաջ:

Ըստ մամուլի հրապարակումներուն՝ հայկական «Սու-30»-երը որպէս համակարգ օգտագործած են միայն չկառավարող հրթիռներ, ինչի պատճառով հայկական կողմը այժմ կը նախատեսէ գնահանացանկ միջոցները՝ օդուժը կառուցելու համար եւ կ'ակնկալեն օգնութիւն ստանալ Հնդկաստանէն:

ԱՄՆ Պիտի Շարունակէ Համագործակցիլ Հայաստանի Եւ Ատրպէյճանի Հետ Վերջնական Կարգաւորման Հասնելու Համար. Նետ Փրայս

ԱՄՆ իր գործընկերներուն հետ կը շարունակէ ներգրաւուած մնալ Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ ուղիղ երկխօսութեան եւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան առնչուող խնդիրներու լուծման ուղղուած ջանքերուն մէջ: Այս մասին ճեպազրոյցի ժամանակ յայտնած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Նետ Փրայսը:

«Միացեալ Նահանգները կը շարունակէ յանձնառու մնալ Հարաւային Կովկասի տարածաշրջանի անվտանգ, կայուն, ժողովրդավարական, բարգաւաճ եւ խաղաղ ապագայի խթանման: Մենք կը շարունակենք ներգրաւուած մնալ երկկողմանիօրէն, համախոհ գործընկերներու հետ, ինչպիսին է Եւրոմիութիւնը, նաեւ միջազգային կազմակերպութիւններու միջոցով, ինչպիսին է ԵԱՀԿ-ը՝ նպատակը Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ ուղիղ երկխօսութեան Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան առնչուող կամ անկէ բխող բոլոր առկա հիմնախնդիրներուն լուծումներ գտնելու համար», ըսած է Փրայսը:

ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակը յիշեցուցած է պետական քարտուղար Էնթոնի Պրինքլինի կողմէ Հայաստանի եւ Ատրպէյճանի իր գործընկերներուն միջեւ Ուաշինկթընի եւ Նիւ Եորքի մէջ կազմակերպուած հանդիպումներուն մասին:

«Մենք պիտի շարունակենք ընել այն, ինչը, մեր գնահատմամբ, լաւագոյն հեռանկարները ունի՝ յառաջ տանելու անվտանգ, կայուն, ժողովրդավարական, բարգաւաճ եւ խաղաղ Հարաւային Կովկասի տա-



ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակ Նետ Փրայս

րածաշրջանի տեսլականը: Մենք, ի հարկէ, կը փափաքինք տեսնել, որ կողմերը իրենք յառաջընթաց կ'արձանագրեն: Թէ ինչպիսին պիտի ըլլայ այս հակամարտութեան համապարփակ լուծումը, մեր որոշելու հարցը չէ: Այդ ծանր աշխատանք է, որ կողմերը իրենք պէտք է ընեն», ըսած է Պետական Քարտուղարութեան խօսնակը:

Նետ Փրայս դարձեալ շեշտած է, որ պիտի շարունակէ համագործակցիլ կողմերուն հետ վերջնական լուծման հասնելու համար:

«Մենք ամէնօրեայ դրութեամբ ներգրաւուած ենք եւ պիտի շարունակենք սերտօրէն համագործակցիլ կողմերուն հետ՝ երկկողմ, եռակողմ, ԵԱՀԿ-ի միջոցով, ինչպէս նաեւ այլ գործընկերներու միջոցով, որպէսզի օգնենք հասնելու այդ վերջնական վիճակին», նշած է Փրայսը:

Անգարան Անհանգստացած Է Հայաստան-Իրան Համագործակցութեան

Յունուար 3-ին Թուրքիոյ նախագահի մամուլի խօսնակ եւ աւագ խորհրդական Իպրահիմ Քալըն թրքական «NTV» հեռուստաալիքի ուղիղ եթերով ակնյայտ մտահոգութիւն յայտնած է Իրան-Հայաստան համագործակցութեան որոշ դրուագներու առնչութեամբ:

«Իրանի հայաստանամէտ դիրքորոշումները, յայտարարութիւնները կը տիրեցնեն ինչպէս ատրպէյճանական կողմը, այնպէս ալ՝ մեզ: Մենք այս մասին եւս կը խօսինք իրանեան կողմին հետ եւ կը փափաքինք աւելի մանրամասն խօսիլ», յայտնած է Իպրահիմ Քալըն՝ ընդգծելով, որ Հարաւային Կովկասի խաղաղութիւնն ու կայունութիւնը կախուած է այն առողջ հաղորդակցումէն, որ հաստատելու պիտի հաստատեն Թուրքիան, Ատրպէյճանը, Իրանը, Հայաստանը եւ նաեւ Վրաստանը:

Աւելին՝ Թուրքիոյ նախագահին խօսնակը ակնարկած է Իրան-Ատրպէյճան լարուածութեան, որ, ինչպէս ցոյց տուաւ 2022 թուականը, որոշակիօրէն աճ արձանագրելու միտում ունի, յառաջիկային եռակողմ՝ այն է պաշտօնական Անգարայի մասնակցութեամբ որեւէ հարթակով աւելի կեդրոնացուած եւ մանրամասն քննարկելու մտադր-



Թուրքիոյ Գախարարի մամուլի խօսնակ՝ Իպրահիմ Քալըն

րութեան մասին: Տարածաշրջանային քաղաքականութեան հարցերով փորձագէտ Արմէն Պետրոսեան նոյնպէս ուշադրութիւն հրաւիրեց այն հանգամանքին, որ Թուրքիան Արցախեան 44-օրեայ պատերազմին, Ռուսիա-Ուրբանիա ճգնաժամին հետեւանքներով Հարաւային Կովկասի մէջ սեփական շահերը բաւարարելու ծիրին մէջ արդէն բացայայտ եւ գործուն մրցակցութեան մէջ է Իրանի եւ Ռուսիոյ հետ:

«Համագործակցութեան ոլորտը կրնայ ըլլալ օդաչուներու պատրաստումէն մինչեւ հնդկական արտադրութեան հրթիռներու գին-

մամբ: Հայաստանը յոյսով է նորացնել իր օդուժը եւ նոր ձեռք բերուած «Սու-30»-ները», կը գրէ լրատուամիջոցը:

«Ներդրումները Կը Դիրքաւորեն Հայաստանը». Orion Summit 2023-ը Տեղի Պիտի Ունենայ Յունիսին՝ Նիւ Եորքի Մէջ



Orion Summit 2023-ը տեղի պիտի ունենայ աշխարհի ֆինանսական կեդրոնին՝ Նիւ Եորք քաղաքին մէջ, Յունիս 19-22-ին, «Ներդրումները կը դիրքաւորեն Հայաստանը» խորագրով: Միջոցառումը պիտի տեւէ 4 օր, պիտի ընդգրկէ գազաթափոցովը եւ այցելութիւններ աշխարհի մեծագոյն ֆինանսական, արհեստագիտական ընկերութիւններ, համալսարաններ, ֆոնտեր, ընտանեկան գրասենեակներ, հանդիպումներ ու քննարկումներ նորարարութիւններու եւ ներդրումներու մասին:

Գազաթափոցովի կազմակերպչական աշխատանքներուն մեկնարկը ազդարարող տեսանիւթը հրապարակուած է Օրիոնի պաշտօնական հարթակներուն մէջ:

«Orion Summit 2022-ի յաջողութիւնը մեզի վստահութիւն տուաւ աւելի յաւանանք տրամադրել կազմելու եւ իրագործելու սթարթափ բնապահպանական համակարգերու եւ տնտեսութեան զարգացման համար: Այս տարի գազաթափոցովին

նպատակն է ստեղծել դրամատնային ներդրումներու միջավայր եւ խթանել համաշխարհային գործընկերութիւնը՝ Հայաստանի մէջ միաձուլումներու եւ ձեռքբերումներու (M&A), ֆոնտերու եւ ընտանեկան գրասենեակներու զարգացման միջոցով», նշած է «Orion Worldwide Innovations Armenia»-ի համահիմնադիր, տնօրէն Տիանայ Արզումանեանը:

«Orion Summit 2023-ի առաքելութիւնն է խթանել նորարարութեան արագ աճը եւ դիրքաւորել Հայաստանն ու հայ ազգը՝ որպէս համաշխարհային տնտեսութեան եւ հասարակութեան բարեկեցութեան ազդեցիկ ուժ, ինչպէս նաեւ դիրքաւորել Հայաստանը աշխարհի մէջ՝ Թուային Ջուղա ցանցի գործունէութեան միջոցով: Մենք պատրաստ ենք համագործակցելու եւ այս ճանապարհը անցնելու պետական ու մասնաւոր ընկերութիւններու հետ», նշած է «Orion Worldwide Innovations»-ի հիմնադիր տնօրէն Էմմա Աւաքելեանը:

Թուրքիոյ Սահմանադրական Դատարանը Վճիռ Կայացուց Հայկական Հիմնադրամներու Օգտին

Թուրքիոյ Սահմանադրական Դատարանը որոշած է, որ հայկական հիմնադրամներու երկու գոյքը վերադարձնելու պահանջի մերժումը կ'ոտնահարէ անոնց սեփականութեան իրաւունքը եւ պէտք է վերանայուի:

Թուրքիոյ մէջ մնացած հայկական միակ գիւղի՝ Վաքըֆլիի եկեղեցին եւ Սթամպուլի Սուրբ Փրկիչ հիւանդանոցը նախապէս իշխանութիւններուն կողմէ բռնագրուած էին եւ փոխանցուած՝ գանձապետարանի օգտին:

«Հիւրիէթ Տէյլի Նիւզը» կը յայտնէ, որ Սահմանադրական Դատարանի որոշումը Թուրքիոյ պաշտօնաթերթին մէջ հրատարակուած է Յունուար 6-ին, եւ կը նշէ, որ հայկական հիմնադրամները Թուրքիոյ Բարձր Դատարան դիմած են ընդհանուր առմամբ 41 գոյք եւ ունեցուածք վերադարձնելու պահանջով:

Թուրքիա-Հայաստան Օդային Բեռնափոխադրումներն Սկսան

Թուրքիան կողմը տեղեկացուցած է, որ ուղիղ օդային բեռնափոխադրումներու արգելքը վերցուցած է: Այս մասին անցեալ շաբաթավերջին յայտարարեց Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ բանբեր Վահան Յունանեանը: Ըստ իրեն հայաստանի Թուրքիա ուղիղ օդային բեռնափոխադրումներու իրականացումը 1 Յուլիս, 2022-ին յատուկ ներկայացուցիչներու հանդիպման ընթացքին ձեռք բերուած համաձայնութիւններէն մէկն էր:

«Կ'ակնկալենք որ միւս համաձայնութիւնը՝ որ է երրորդ երկիրներու քաղաքացիներու համար ցամաքային սահմանն անցնելու հնարաւորութեան ապահովումը նոյնպէս շուտափոյթ կեանքի կը կոչուի» ըսաւ Յունանեանը:

«Հապէր Թիւրք» հեռատեսիլի կայանը յայտնած էր որ Թուրքիա-Հայաստան բանակցութիւններու ընթացքին, որոշում կայացուցած են վերջնական ուղիղ բեռնատար օդային փոխադրութիւններու խոչընդոտները:

Լոս Անճելըսի Քաղաքապետն Ու Քաղաքային Խորհուրդի Նախագահը Պայտընին Կոչ Ըրած Են Օգնութեան Հասնելու Արցախահայութեան



Լոս Անճելըսի քաղաքապետ Քերըն Պասը եւ Քաղաքային Խորհուրդի անդամները

Լոս Անճելըսի քաղաքապետ Քերըն Պասը եւ Քաղաքային Խորհուրդի նախագահ Փօլ Գրեգորեանը պաշտօնական գրութեամբ դիմած են ԱՄՆ նախագահ Ջօ Պայտընին՝ կոչ ընելով օգնութեան հասնելու Արցախի ժողովրդին: Այս մասին Պասը եւ Գրեգորեանը նամակ հրատարակած են:

Ըստ նամակի հեղինակներուն՝ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինը միայն Ուքրանիոյ ժողովրդավարութիւնը չէ, որ կը փորձէ խաթարել, եւ անոր գործողութիւններուն հետեւանքով այսօր Արցախի 120 հազար քաղաքացիները բախած են ցուրտէն, սովէն ու ղեղորայքի պակասէն դանդաղ մահուան դատապարտուելու սպառնալիքին:

«Մարդասիրական աղէտի պատճառը Արցախի ժողովուրդը պաշարմամբ պատանդ պահող միտումնաւոր շրջափակումն է՝ իրականացուած Ատրպէյճանի բռնապետ Ալիեւի կողմէ, ուսական զորքերու աջակցութեամբ: Այս անօրինական շրջափակման միջոցով երկու բռնապետութիւնները կը փափաքին պատժել Արցախը եւ Հայաստանը, որոնք համարձակած են տարածաշրջանին մէջ յառաջ տանիլ ժողովրդավարութիւնը եւ կայունութիւնը», կը նշեն նամակին հեղինակները՝ յաւելելով, որ ԱՄՆ-ի կողմէ համարձակ գործողութիւններու բացակայութիւնը կրնայ յանգեցնել տարածաշրջանին մէջ հայերու ներկայութեան ցեղասպանական ոչնչացման:

Ներկայացնելով Դեկտեմբեր 12-էն Արցախի մէջ ստեղծուած ծանր իրավիճակը՝ Լոս Անճելըսի քաղաքապետն ու Քաղաքային Խորհուրդի նախագահը Ջօ Պայտընին կոչ կ'ընեն օգնութեան հասնելու Արցախի ժողովուրդին հետեւեալ կերպ.

Տրամադրել ԱՄՆ-ի ուղիղ մարդասիրական աջակցութիւնը Արցախին, այդ շարքին՝ սննդամթերք եւ ղեղորայք:

Յստակ ուղերձ չլի փութիւնին ու Ալիեւին, որ ԱՄՆ-ն կը պահանջէ եւ գործողութիւններու պիտի ձեռնարկէ՝ երաշխաւորելու անվտանգ թոնիչքներու իրականացումը Արցախի բնակչութեան օգնութիւն հասցնելու համար:

Դիւանագիտական ջանքեր գործադրել Պաքու-Ստեփանակերտ ուղիղ երկխօսութեան կայացման համար՝ երաշխաւորելով արցախահայութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը:

Պնդել, որ Արցախի մէջ ուսական խաղաղապահները փոխաբիւնուին միջազգային խաղաղապահ առաքելութեամբ:

Շօշափելի գործողութիւններու ձեռնարկել Ատրպէյճանի դէմ եւ պատասխանատուութեան ենթարկել այդ երկիրը իր պատերազմական յանցագործութիւններուն համար՝ համաձայն Ազատութեան աջակցութեան ուխտի 907-րդ բաժնի եւ Մակնիթսքիի ուխտի:

Նամակին հեղինակները յոյս յայտնած են, որ ԱՄՆ-ն անգործ չհետեւի, թէ ինչպէս յարձակողական բռնապետութիւնները իրենց ժողովրդավարական հարեւաններուն դէմ ցեղասպանական քաղաքականութիւն կը վարեն:

Աւելի վաղ Լոս Անճելըսի հայկական համայնքի ներկայացուցիչները բողոքի շարժում կատարած էին Լոս Անճելըսի քաղաքապետարանին մօտ՝ պահանջելով քայլերու ձեռնարկել Լաչինի միջանցքը բանալու եւ Արցախի շրջափակումը վերացնելու ուղղութեամբ:

Արտակարգ Դրութիւն Գալիֆորնիոյ Մէջ 424,000 Հոգի Առանց Ելեկտրականութեան

Շաբաթներէ ի վեր Գալիֆորնիոյ մէջ կը տիրապետեն տեղատարբ յորդառատ անձրեւները, քամիներն ու ծովափնեայ ողողումները բազմաթիւ գետեր յորդելով ծանր վնասներ հասցուցած են բնակելի տուններուն եւ ցանկատարածութիւններուն: Այս կապակցութեամբ արտահանման նախագրուչացումներ տրուեցան մասնաւորաբար Սանթա Գլարայի, Ալամետայի, Սագրամենթոյի, Սանոմայի, Մոնթէրէյի եւ Սանթա Գրուզ գաւառի բնակիչներուն, ուր բազմ

մահարիւր ծառեր արմատախիլ եղած են եւ 424,000 հոգի առանց ելեկտրականութեան մէջ են: Իսկ Սան Ֆրանսիսքոյի շրջանին մէջ անտուն մնացած են 14,000 հոգի:

Արդարեւ, մթնոլորտային անբարենպաստ եւ ժխտական պայմաններու պատճառով Գալիֆորնիոյ կառավարիչ Նիոլասան նախագահ Պայտընէն խնդրած է դաշնակցային շտապ աջակցութիւն յայտարարել Գալիֆորնիոյ համար, առաջին անգամ յառաջիկայ բարդ իրավիճակին:

Վարչապետ Փաշինեանի Մամլոյ Ասուլիսը

Շարունակուած էջ 1-էն

րած քայլին ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան նկատմամբ եւ ապացոյց այն բանի, որ Հայաստանը չի ճանաչում եւ մտադիր չէ ճանաչել Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը: Եւ դրանից էլ զարգացնում են այն խօսույթը, որ իրենք էլ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը չեն ճանաչում: Դրանից էլ մենք այլ հետեւութեան ենք գալիս, ասում ենք, որ Սոթք-Խոզնավարից սկսած եւ Սեպտեմբերի 13-ի ոտնձգութիւնները հիմք են տալիս ենթադրելու, որ Ատրպէյճանը երբեք չի ճանաչի ՀՀ տարածքային ամբողջականութիւնը: Ընդհակառակը՝ Հայաստանի նկատմամբ տարածքային նոր նկրտումների ի ցոյց բերելու նպատակ է դրել», ըսաւ Փաշինեան:

Ատրպէյճանը կը յայտարարէ, որ Հայաստանի մէջ ժամանակին բնակուած ատրպէյճանցիներու մարդահամար կ'ընէ: «Մենք էլ ենք մարդահամար անում: Հայաստանն էլ Պաքուից, Սոււզգայից, Գետաշէնից եւ այլ տեղերից բռնագաղթած հայերի մարդահամար է իրականացնում», նշեց Փաշինեան:

Անդրադառնալով հարցին, թէ արդեօք թուրքերը թշնամիներ են, թէ՞ ոչ, ան ըսաւ, որ կայ պատմական իրողութիւն, որ ցանկութեան պարագային ալ հնարաւոր չէ փոխել, սակայն այդ թշնամանքի զգացումը պէտք է կառավարուի: Փաշինեան նաեւ նշեց, որ Ատրպէյճանը կը համարէ, որ ռազմական յաջողութեան հասած է եւ այդ պէտք է զարգացնէ՝ առաւելագոյնը ստանալու համար:

Փաշինեանը կարեւորեց աւելի խորագէտ ըլլալ՝ չարթահարելու ծառայած մարտահրաշխանները:

«Եթէ մենք մեր տարածաշրջանում մեր յարաբերութիւնները չփոխենք, չենք կարողանալ կառավարել սպառնալիքները, որոնք կան: Բայց փաստ չէ, որ միայն մեր ցանկութիւնը բաւարար է», ըսաւ վարչապետը՝ կարեւորելով շատ ձկուն ըլլալը:

Լրագրողը հետաքրքրուեցաւ, թէ ինչպէ՞ս վարչապետը կը պատկերացնէ Լաչինի միջանցքի շրջափակման հետ կապուած հարցին լուծումը, ի՞նչ ճանապարհով եւ ի՞նչ կ'ընէ կառավարութիւնը այդ ուղղութեամբ: Լրագրողը նաեւ վարչապետէն խնդրեց անդրադառնալ ռուսական հարթակներուն մէջ տարածուած տեղեկութեան, թէ Հայաստանը վերջնագիր ներկայացուցած է Ռուսիոյ, այն է՝ եթէ մինչեւ Յունուար 10 չբացուի Լաչինի միջանցքը, ապա Հայաստանը դուրս պիտի գայ ՀԱՊԿ-էն եւ ԱՊՀ-էն:

Վարչապետը նախ ըսաւ, որ չի կարծեր, թէ գործընկերներուն հետ պէտք է վերջնազորեալ լեզուով խօսիլ:

«Այն, ինչ ունենք ասելու տուեալ իրադրութեան հետ կապուած, արդէն հրապարակային ասուել է եւ մեծ հաշուով ասելացնելու բան չկայ: Նաեւ հրապարակային գնահատականներ են տրուել Լաչինի միջանցքը փակելու փաստին», նշեց վարչապետը:

Վարչապետը անհրաժեշտ կը համարէ աւելի խոր եւ ընդհանրական հասկնալ Լաչինի միջանցքին շուրջ ստեղծուած իրավիճակին բովանդակութիւնը:

«Իմ գնահատմամբ՝ այն, ինչ տեղի է ունենում Լաչինի միջանցքում

ընում առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի ժողովրդին, Լեռնային Ղարաբաղի հայութեան՝ սեփական հայրենիքում ապրելու կամքը կոտորելու նպատակն ունի: Սա է ամենակարեւոր բովանդակութիւնը խնդրի: Սա պէտք է հաշուի առնենք: Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան դիրքորոշումներն արտայայտուել են եւ, կարծում ենք, որ մեր գործիքակազմը պէտք է լինի դիւանագիտական, այն է՝ միջազգային հնարաւորինս մեծ ճնշում գործադրել Լաչինի միջանցքը բացելու հարցում», ըսաւ Փաշինեան:

Վարչապետը ուշադրութիւն հրահրեց այն փաստին վրայ, որ 2020 թուականի Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան 6-րդ կէտով Լաչինի միջանցքին վերաբերեալ իրական կարգապահութիւններ դրուած են Ատրպէյճանի Հանրապետութեան եւ Ռուսիոյ Դաշնութեան վրայ:

Փաշինեան յիշեցուց, որ 2022 թուականին Հայաստանի Հանրապետութիւնը Լեռնային Ղարաբաղին աննախադէպ ծաւալի՝ աւելի քան 170 միլիաոն դրամի աջակցութիւն ցուցաբերած է:

«Մենք շարունակելու ենք աջակցութիւն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցներին: Գիտէք, որ մարդասիրական ճգնաժամը կառավարելու հարցում Լեռնային Ղարաբաղի ժողովրդին աջակցութիւն ցուցաբերելու համար փոխվարչապետ Տիգրան Խաչատրեանի գլխաւորութեամբ ձեւաւորուած է աշխատանքային խումբ: Գիտէք, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդում է հարցը բարձրացուել եւ այն շարունակում է մնալ ՄԱԿ Ախ-ի օրակարգում: Ի հարկէ, Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զորախմբի վերաբերեալ եւս դիրքորոշումներ արտայայտել եմ տուեալ իրավիճակում: Պէտք է ուշադրութիւն հրահրեմ այն փաստի վրայ, որ, այո, Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զորախումբը պէտք է ապահովի Լաչինի միջանցքի բնականոն գործունէութիւնը, եւ դա յստակ ձեւակերպուած է եռակողմ յայտարարութեան մէջ», եզրափակեց Փաշինեան:

Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան խաղաղապահ զորախումբերու համատեղ զօրավարութիւնը Հայաստանի մէջ այս տարի պիտի չկատարուի, ստեղծուած իրավիճակին մէջ Հայաստանը նպատակադրած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը իր ասուլիսին ընթացքին:

«ՀՀ պաշտպանութեան նախարարն արդէն իսկ ՀԱՊԿ միաւորուած շտաբին գրաւոր տեղեկացրել է, որ մենք ՀՀ-ում նման զօրավարութիւններ անցկացնելն այս իրավիճակում նպատակադրած մար չենք համարում: Եւ այդ զօրավարութիւնները ՀՀ-ում, յամենայնդէպս, այս տարի չեն կատարուի», ըսաւ Փաշինեան:

Հայաստանի վարչապետը ողջունելի քայլ համարեց օգային բեռնափոխադրումներուն արգելքը վերացնելու մասին Թուրքիոյ յայտարարութիւնը:

Հայաստանի վարչապետին գնահատմամբ՝ այս իրադարձութիւնները կարեւոր են ոչ միայն Հայաստան-Թուրքիա յարաբերու-

թիւններուն առումով, այլեւ տեղի ունեցող միջազգային լոկիսթիք շղթաներու շատ լուրջ փոփոխութիւններու ծիրին մէջ: «Կարծում եմ՝ այս տարածաշրջանը միջազգային բեռնափոխադրումների առումով շատ աւելի հետաքրքիր է դառնում, քան նախկինում, միջազգային մեծ կարեւորութիւն է ձեռք բերում: Այս իմաստով, ի հարկէ, Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանի բացումը եւ հայ-թուրքական երկաթուղու բացումը շատ աւելի համաշխարհային նշանակութիւն է ստանում: Յոյս ունեմ, որ մենք հնարաւորութիւն կ'ունենանք շարժուելու այս ճանապարհով: Պէտք է արձանագրեմ պատրաստակամութիւնը նաեւ Երասխ-Սաղարակ-Օրտուպատ-Մեղրի-Հորատիք երկաթուղին վերականգնելու վերաբերեալ: Մենք դրան պատրաստ ենք», յայտնեց Փաշինեան՝ նշելով, որ կայ շահագրգռուածութիւն Հայաստանի տարածքով բեռնափոխադրումներու իրականացման, արեւելք-արեւմուտք ուղղութիւններով մայրուղիներու բացման, նաեւ նոր ճանապարհներու կառուցման ուղղութեամբ:

«Միակ բանը, որ այս ամէնին խանգարում է, Ատրպէյճանի շարունակական խօսույթն է ինչ-որ միջանցքների մասին: Մենք պատրաստ ենք իրագործել հայկական խաչմերուկի մեր տեսլականը: Նաեւ հասկանում ենք, որ ձեզ յայտնի հանգամանքների բերումով միջազգային բեռնափոխադրումների, լոկիսթիք շղթաների եւ ուղիների համաշխարհային փոփոխութիւններ են տեղի ունենում, եւ այս փոփոխութիւնները կարելի է օգտագործել ի նպաստ տարածաշրջանում կայունութեան, խաղաղութեան, այլ ոչ թէ հակառակը», նշեց վարչապետը:

Ան ընդգծեց, որ այդ պարագային շատ աւելի գործուն նիտի ըլլայ հիւսիս-հարաւ ճանապարհային եւ երկաթուղային բեռնափոխադրումներու իրականացումը: «Այս պարագայում մենք խօսում ենք նաեւ Հայաստանի եւ Նախիջեւանի ինքնավար Հանրապետութեան, այսինքն Ատրպէյճանի տարածքով իրան-Հայաստան եւ իրան-Ատրպէյճան եւ իրան-Ռուսաստան երկաթուղային հաղորդակցութեան վերականգնման մասին, մենք պատրաստ ենք այս ուղղութեամբ գնալ», ըսաւ ան:

Պատասխանելով հարցին, թէ յառաջիկային Հայաստանի եւ Թուրքիոյ ֆուլթայլի ազգային հաւաքականներուն միջեւ հանդիպումներու շրջանակին մէջ արդեօք հնարաւոր են երկիրներու դիվարներու կոտորածները Փաշինեան ըսաւ՝ «Դա կարելի է, ի հարկէ, ընդհանուր իրավիճակից եւ երկու կողմերի քաղաքական կամքից: Կարծում ենք՝ կարելի է օգտագործել յարաբերութիւնների կարգաւորման այն դրական հնարաւորութիւնները, որոնք կը ստեղծուեն»:

ՀԲԸՄ-ի Լոս Անճելլոսի երգչախումբի վարչութեան ատենապետուհի Կարինէ Սէօյլեմեան նաեւ շեշտեց այս ծրագրին յաւելեալ արժէքը երիտասարդ սերունդին համար: «Փորձառութիւն մըն է, որ կրնայ երկար ճամբայ անցնիլ երգչախումբային երաժշտութիւնը գնահատելու համար՝ միաժամանակ զարգացնելով կեանքի այնպիսի հմտութիւններ, ինչպէս փորձերու կարգապահութիւնը, խմբային աշխատանքի արժէքը եւ բեմական ներկայութեան ուժը»:

«Այն հայ երիտասարդները, որոնք անցնող Դեկտեմբերին ներկայ գտնուեցան Լոս Անճելլոսի երգչախումբի տօնական համերգին եւ հմայուեցան այդ ոգեւորող երաժշտական ժանրի կախարհանքին, հիմա ժամանակն է որպէսզի բացառապէս իրենց սեփական «ներքին կատարողը», նշեց ՀԲԸՄ-ի Արեւմտեան շրջանի տնօրէն Գոհար Ստամբոլեանը:

Կանուխ արձանագրութիւնները մինչեւ 19 Յունուար 2023 կը կազմեն \$100 տոլար իւրաքանչիւր պատանիի համար որպէս առաջին ամսուան վճարում: Ապա, շաբաթը մէկ կայանալիք դասերու ամսական արժէքը \$120 տոլար է: Արձանագրուելու համար այցելեցէ՛ք՝ agbu.org/la-junior-choir-register:

Լուսանկարի գրութիւն. Լոս Անճելլոսի երգչախումբը երաժշտական տօնական կատարումներով հանդէս կու գայ Փասատինայի ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան կատարողական Արուեստի Կեդրոնին մէջ:

Անցեալ 33 Տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտը \$968 Միլիոնի Օժանդակութիւն Հայթաժառ է Հայաստանին ու Արցախին, Ներառեալ \$21 Միլիոն՝ 2022ին



Անցեալ 33 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու գաջն նախորդած Միացեալ Հայկական Ֆոնտը \$968 միլիոն ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն հայթաժառ են Հայաստանին ու Արցախին՝ 158 թուիչքներով եւ 2,540 ծովային արկղերով: 2022-ի ընթացքին, Հայաստան Արցախ Ֆոնտը \$21 միլիոն ընդհանուր արժէքով դեղորայք, բժշկական պիտոյքներ, եւ այլ մարդասիրական ապրանքներ ուղարկած է Հայաստան ու Արցախ, ներառեալ \$2.8 միլիոն արժէքով օժանդակութիւն՝ 2022-ի չորրորդ եռամսեակին: Սոյն գումարին \$1.8 միլիոնը նուիրած է AmeriCares կազմակերպութիւնը, եւ մնացեալ \$1 միլիոնը՝ Direct Relief կազմակերպութիւնը:

Այս վերջնագոյն ժամանակաշրջանին նուիրաբերուած մեծ քանակութեամբ դեղերը, բժշկական պիտոյքներն ու Clorox մակնիշի հականերխիչ անձեռոցիկները առաքուած են ՀԲԸՄ Քրտիա Նազարեան Սուրբհայ Գաղթականներու Բժշկական Կեդրոնին, Արաբկիր Միացեալ Մանկական Բարեգործական Հիմնադրամին, Հայ

Օգնութեան Ֆոնտին, Քանաքեռ-Զէյթուն Բժշկական Կեդրոնին, Մեծն Ներսէս Բարեգործական Կազմակերպութեան, Մուրացյան Մանկական Գեղձաբանական Կեդրոնին, Ռ. Յոլյանի անուան Արիւնաբանական Կեդրոնին, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Բժշկական Կեդրոնին, եւ Հայաստանի ու Արցախի Առողջապահութեան Նախարարութիւններուն:

»Հայաստան Արցախ Ֆոնտին կանոնաւորաբար կ'առաջարկուի, բոլորովին անվճար կերպով, միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտոյքներ« , յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեան եւ շարունակեց՝ »Մեզի կը մնայ հոգալ առաքման ծախսը միայն: Ուրեմն կը քաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը ուղարկել Հայաստանի եւ Արցախի բոլոր բժշկական կեդրոններուն« :

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտի գրասենեակին. հեռաձայնի թիւ՝ (818) 241-8900. Իմէյլի հասցէ՝ sassoun@pacbell.net:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամ

Շարունակուած էջ 1-էն

տեւ շրջափակումը յանգեցրել է ասագնացող մարդասիրական ճգնաժամի, ինչը կարող է վերածուել մարդասիրական աղէտի: Զգալի է դարձել առաջին անհրաժեշտութեան ապրանքների, սննդի ու դեղորայքի պակասը: Փաստացի, Լեռնային Ղարաբաղի ողջ բնակչութիւնը գրկուել է ազատ տեղաշարժի իրաւունքից, հազարաւոր մարդիկ, այդ թւում՝ երեխաներ, ձմռան ցուրտ պայմաններում մնացել են ճանապարհներին, բազմաթիւ ընտանիքներ ակամայ բաժանուել են՝ յայտնուելով շրջափակման տարբեր կողմերում:

Ատրպէյճանը պարտաւոր է անյապաղ դադարեցնել Լաչինի միջանցքի շրջափակումը եւ իր իսկ կողմից ստանձնած պարտաւորութիւնները շրջանակում երաշխաւորել այդ կեանքի ճանապարհով Լեռնային Ղարաբաղի բնակիչներին ազատ տեղաշարժը եւ փոխադրութեան միջոցները ու բեռների երթեկցութեան անվտանգութիւնը:

Կոչ ենք անում ամբողջ առաջադէմ մարդկութեանը եւ համապատասխան միջազգային կառույցներին ներդնել իրենց բոլոր ջանքերը՝ կանխարգելելու հնարաւոր նոր ցեղասպանութիւնը, ինչպէս նաեւ պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի բնակչութեան բոլոր հիմնարար իրաւունքները:

Միեւնոյն ժամանակ կոչ ենք անում ՄԱԿ-ի Գլխաւոր քարտուղարին, այլ միջազգային կառույցներին ու շահագրգիռ պետութիւններին անյապաղ ջանքեր գործադրել Ստեփանակերտի օդակայանի գործարկման ուղղութեամբ եւ երաշխիքներ ապահովել օդային ճանապարհով Լեռնային Ղարաբաղի բնակչութեանը հրատապ մարդասիրական աջակցութիւն հասցնելու նպատակով:

Վերահաստատում ենք, որ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը հաւատարիմ է մնում իր առաքելութեանը, որն ամբողջովին հիմնուած է համամարդկային արժէքների ու մարդասիրական սկզբունքների վրայ»:

Իրաքահայերու Շաբաթոյնայ Վարժարան Նոր Տարուայ Եւ Ս. ԾՆՆՂԵԱՆ 44-ՐԴ Տօնակատարութիւնը



ԽԱՉԻԿ ԾԱՆՈՅԵԱՆ

«Մենք ճամբայ ունինք Պիտի հասնիքը Սասուն Հայերի հողը մեզ է սպասում»:
Ազգային երգ

Շաբաթ, Դեկտեմբեր 17, 2022, Իրաքահայերու Հայ Ընտանեկան Միութեան Շաբաթօրեայ վարժարանէն ներս, տօնական անխառն մթնոլորտ մը կը տիրէր: Այդ օր դպրոցի աշակերտութիւնը, գլխաւորութեամբ վարժարանի ժրջան տնօրէնուհի եւ աննման նուիրեալ ուսուցիչներուն հայաբոյր մթնոլորտի մէջ, երգով, արտասանութիւններով, կենդանի պատկերներով նշեցին Նոր Տարուան եւ Քրիստոսի Մեծախորհուրդը եւ սքանչելի ծննդեան օրը, ներկայութեամբ Միութեան վարչութեան ատենապետուհին՝ Տոբթ. Մարալ Անճարիօլեանի, դպրոցի հոգաբարձութեան ատենապետին, խանդավառ ծնողներու եւ յորդահոս բազմութեան:

Առաւօտեան ժամը 10:00-ին, 90 աշակերտ-աշակերտուհիներ տօնական օրերու վայել զգեստներով,

վեր կը պահէ այս դպրոցը եւ կը կատարէ ազգապահպանման այս սուրբ գործը: Այսօր մօտ 3,000-է աւելի հայ փոքրիկներ այս վարժարանը յաճախած են եւ ԱՆՎՃԱՌ հայեցի դաստիարակութիւն ստացած են: Իսկ այս 44 տարիներու ընթացքին մօտ 96 ԿԱՄԱՌՈՐ ուսուցիչ-ուսուցչուհիներ ծառայած են այս վարժարանէն ներս:

Վարժարանի տնօրէնուհի Տիկ. Անահիտ Խաչատուրեանի բարի գալուստի եւ բացման շնորհաւորական ջերմ խօսքէն ետք, յաջորդաբար ելոյթ ունեցան Ա.Բ. եւ Գ.ի դասարաններու բաժնուած 90 աշակերտ-աշակերտուհիներ, որոնք մօտ 40 արտասանութիւն, երգ եւ խօսքեր ըսելով շէն ու շէնշող մթնոլորտ մը ստեղծուեցաւ սրահէն ներս:

Անոնք Ձմեռ պանդոկի կոնձ տացան լաւ գաւակներ ըլլան, իրենց հայրերը, մայրերը, եղբայրներն ու քոյրերը սիրելի գատ, յարգել եւ սիրել իրենց բոլոր հարազատները, իրենց մայր Հայրենիքը, մայրենի լեզուն եւ մեր ժողովուրդի հաւատքի կեդրոն եւ աղբիւր Հայ Առաքելական եկեղեցին:



տօնական երգերու եւ ծափերու կշռոյթներով բեմ բարձրացան: Անոնք լիաթոք եւ միաբերան կատարեցին «Տէրունական» եւ «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արախ մեզ Տէր» աղօթքները, որմէ ետք անոնք երեք խումբերով ելոյթ ունեցան:



Իրաքահայերու Հայ Ընտանեկան Միութիւնը, յատուկ կեդրոնաշէնք չունենալով, ինչպէս նաեւ ոչ մէկ յարանուանական եկեղեցի մը, կամ՝ համահայկական կազմակերպութեան մը նիւթական եւ բարոյական հովանաւորութիւնը վայելելով, Իրաքահայերու Հայ Ընտանեկան Միութիւնը 44 տարի է ի

Ամէն խումբի ելոյթէն առաջ, իւրաքանչիւր բաժնի պատասխանատու ուսուցչուհի իր սրտի եւ շնորհաւորական ելոյթով կ'ողջունէր ներկայ ծնողները եւ իր սիրաշերմ մաղթանքներով կը շնորհաւորէր աշակերտութեան, ծնողներուն, հայրենի ժողովուրդի եւ ողջ հայութեան տօնական օրերը: Մօտ մէկուկէս ժամ տեւող այս հանդիսութիւնը, ժողովուրդը անձանձրոյթ եւ մեծագոյն հաճոյքով եւ բացազանջութիւններով իր զնահատանքը եւ հիացմունքը կը յայտնէր իրենց գաւակներուն, ուսու-

Քառասունքի Առիթով - Գիտնական Մարգարետ Մարկոսեան Գրականագետ Ժիրայր Դանիելեան Անդարձանելի Կորուստներ

«Լոյս լուսոյ Մայր եւ կենարար Բանին բնակարան Քեզ երանիցեն ազգ եւ ազինք աննայն»

ՇԱՐԱԿԱՆ



ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ձոյգ Կորուստներ

Տարեկից երկու հանճարեղ մտաւորականներ ինկան միասին, նոյն շաբթուն, Մարգարետ հոս Գալիֆորնիա եւ ժիրայրը քիչ մը անդին Պոսթոն, երկուքն ալ ժիրայրը հայ մտաւորականութեան ռահիւրացի, եւ Մարգարետ միջազգային գիտութեան բարձրագոյն գինը վճարելէ ետք, ետին ձգելով ցաւ եւ կսկիծ, ահաւոր եւ անփոխարինելի բացակայութիւն մը: Երկուքն ալ ճանչնալու երջանկութիւնը ունեցայ, մասնաւոր Պոկտոր Մարգարետը, ինք Թոմարզացիի գաւակ, ու ես էվէրէկցիի, շատ մօտիկ հայրենակիցներ: Իր անուշ ժպիտով Թոմարզացի քրտարացնելով Մարգարետ կ'ըսէր թէ Մամնդաւ աւանն էր:

Ժիրայրին հետ Woodbury համալսարանէն Հրաւիրուած էինք բանախօսելու հայերէն առաջին գիրքի եւ Աստուածաշունչ Մատեանի (1666) տպագրութեանց յոբելաններուն առիթով (1512-2012) Արեւմտեան մեր Թեմի յանձնարարութեամբ: Միակ հանդիպումս եղաւ: Բանախօսեց եւ իմ բանախօսութեան աւարտին այնքան բախնդիր նկատողութիւն մը ըրաւ: Կ'ըսէի թէ հայերէն գիրքերու տպագրութեան ռահիւրան Յակոբ Մեղակարան էր որ իր տպագրած առաջին վեց գիրքերէն մէկուն «Պատարագատետր»ի վերջաւորութեան երկու տող յիշատակարան մը թողած էր ուրկէ միայն, եւ միայն այնտեղ կը ստուգուէր Մեղակարանի անունն ու առաջին տպագրութեան վայրն ու թուականը՝ Վենետիկ (Վենետիկ), 1513:

Ժիրայր հարցուց ինձի թէ ո՞վ գտած էր այդ երկտող յիշատակարանը եւ յայտնաբերած: Մանրամասնութեանց մէջ մանրամասնութիւն մը որուն Դանիելեան ինք միայն տեղեակ էր: Ըսաւ Երուսաղէմի միաբաններէն Լուսարարայետ Սահակ Եպիսկոպոս Խապայեան, յետագային Սահակ Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ժողովուրդը ու թուականներն իրենց կարողացած էր յիշատակարանը եւ առաջին անգամ ըլլալով յայտնաբերած այդ կարեւոր տեղեկութիւնը: Ժիրայր Դանիելեան մեծ մատենագէտէն սորվեցայ տողա-

տակի այդ յայտնաբերումը:

1969-ի ամրան Մարգարետ Մարկոսեան յանակնկալա Ֆիլատելֆիոյ Սուրբ Երրորդութիւն նորաշէն եկեղեցու գրասենեակէն ներս կը մտնէր վերեւ մէջբերուած «Լոյս լուսոյ մայր» շարականի երգակցութեամբ, եւ ճակտին գինք աւելի անուշցնող եւ ինքնատիպ դարձնող սեւ մագերու խուրձով: Ձարմացայ: Այդ գողտրիկ շարականը գիտե՞ս թէ երբ կ'երգենք, հարցուցի: Այո ըսաւ, Աւագ Հինգշաբթիի խաւարման գիշերը: Գիտէի որ Փենսիլվանիոյ նահանգային համալսարան կ'ուսանէր, Ֆիլատելֆիայէն հեռու նահանգին կեդրոնական շրջանին մէջ, սակայն չէի գիտեր շարականներու մասին իր ջերմաստիճանը մինչեւ այն ատեն երբ կարդացի իրեն պատանեկան ընկեր այժմ Նորվան Արքեպիսկոպոս Ջաքարեանի սրտառուչ մահախօսականը: Սրբազանը նախկին անունով Արմէն, մեր օրերու Դպրեվանքի փայլուն ուսանողներէն մին եղած է ու երկար տարիներու հոգեւոր ծառայութիւն մատուցած Ֆրանսայի մէջ որպէս թեմակալ Առաջնորդ: Մարգարետ ըսաւ թէ այցի եկած էր եւ նուէր մը ունէր տալիք:

Քեզի պիտի տամ իմ Master's Degree-ն, ըսաւ: Ինչու համար քու վաստակածդ ուրիշին պիտի տաս, ես հատ մը ունիմ արդէն Temple համալսարանէն, ըսի: Այս շաբաթ PhD աստիճանը ստացայ, այնպէս որ նախորդները կրնամ բաժնել, ըսաւ: Սրտագին կը շնորհակտեմ ըսելով ողջագուրուեցանք: Ձինք յաճախ կը տեսնէի արեւելեան ասիան: Երբ Գալիֆորնիա փոխադրուեցանք աւելի մօտ եղանք: Անգամ մը բանախօսեց կ'ըլնտէլի պետական գրադարանի սրահին մէջ ուր անպայման ներկայ եղայ: Հոյակապ բանախօսութիւն: Յետոյ կամացուկ մը ըսի Մարգարետին իմ լաւագոյն տպագրութիւնը, եւ թէ քիչ մը կարճի կրնար կապել:

Մեր սիրելի եւ յարգելի գոյգ մը կորուստներու մասին շատեր գրեցին ամենուրեք, Նորվան Սրբազան եւ յատկապէս Մարգարետին «գուրգուրացող» քոյրը Սեդա Խոշեանը, ինչպէս կարդացի գիրքին նախաբանին մէջ: Արժան եւ իրաւ: Հիւանալի արժեւորումներ են բոլորը: Շատ աւելին քան մահախօսականներ: Յուզիչ է Սեդա Խոշեան-

նի այնքան հարազատ ու հայերէն լեզուի նկատմամբ բարձրագոյն գիրքերէն սիրտ հասնող գրութիւնը իր եղբոր մասին:

Սեդա Խոշեան ի միջի այլոց այս յատկանշական խօսքերը կ'ըսէր եղբոր մասին: «Հաղորդուեցար մեր շարականներու դիւթանքով եւ կենսաւորուեցար մեր հայրապետներու պատգամներով ու մնացիր հաւատքիդ մէջ ու Հայ Եկեղեցու հանդէպ ժայռի պէս ամուր»: Նուազ սրտառուչ չէ նաեւ Նորվան Արքեպիսկոպոս Ջաքարեանի յուշերն ու պատանեկան եկեղեցի երթն ու դարձը, նոյնպէս գրուած բացառիկ եւ ինքնատիպ ու հարազատ ոճով: Շատ ուսանելի են նաեւ Երուսաղէ Ազատեանի գուսպ եւ բնորոշիչ գրութիւնները դաստիարակ եւ խմբագրապետ, վարժարաններու Տնօրէն Պր. Ժիրայր Դանիելեանի մասին, եւ Վիգէն Աղաբաբեանի շատ յարգալից եւ դաստիարակիչ ընծայականը առաջնակարգ մատենագէտին վերաբերմամբ:

Մեր այս համառօտ յարգանքի արտայայտութիւնը ոչ մէկուն եւ ոչ միւսին կը հասնի արդարեւ: Պարզապէս տողատակ մըն է որ կ'աւելցնեմ:

Եկաւ ու հասաւ մակագրուած օրինակ մը Մարգարետ Մարկոսեանի «Քաղաքներու Կախարդանքը» Ա մաս: Հայ կեանքի իրականութիւնը ճշգրտող եւ ճնշող հիւանդութիւնները կանխատեսող Մարգարետ կը գրէ երգիծական ամենաջերմ ոճով տալով դարման մը եղածին ու վրիպածին մասին Պոստոնի իր տան մէջ: Բարեկամներ կը հաւաքուին ու հաստատ եւ կամ թափանցիկ, երբեմն թափթիված կերպով գիրար կը հասկնան, այսինքն չեն հասկնար, կը խճճեն գիրար տալու համար եզրափակիչ «որոշումներ» միշտ հայեացքին ներքեւ գրքի հեղինակին՝ Թոկտոր Մարգարետ Մարկոսեանի:

«Ձախող Ձեռնարկ» կոչուած գլուխը բանաստեղծուհի Միլվա Կապուտիկեանի այցելութեան առիթով հիւրասիրութեան ընթացքին կը պատահէր, առաջին ակնարկով

բնականաբար իբր այդպիսին կ'ընկալէ ընթերցողը մինչեւ այնտեղ ուր ամէն ինչ կարգին եղած, կոկիկ յայտագրի աւարտին, կին մը կը բողոքէ թէ «ձեռնարկը ձախող էր» որովհետեւ իր տղուն յայտագրին մէջ արտասանելու բաժին չէր տրուած: Ահա Մարգարետին իրական պատմաներէն մին, աչքին առջեւ պատահած կենդանի երգիծանք: Նման դիպուածներ շատ են հատորին մէջ երբեմն շատ թափանցիկ նոյնիսկ: Հիւրընկալ եղած են ինք եւ տիկինը Սեդան, ու բարեկամներ յաճախ հանդիպած են իր տան մէջ, աւելի հարցեր ստեղծելու քան թէ լուծելու համար: Միշտ գրական մեծ ու փոքր անուններ խօսակցութեան նիւթ դարձած են, Սիլվա Կապուտիկեան, Անդրանիկ Մառուկեանն ու Ուիլիամ Մարոյեանը, ինչպէս նաեւ Վահէ Օշական եւ ուրիշներ:

Պր. Դանիելեան ձեռնարկած է թերթերու խմբագրութեանց «Շիրակ» եւ ապա «Կամար» պարբերաթերթերու: Ստանձնած է դժուարին եւ պատասխանատու տնօրէնի պաշտօնը միացեալ երկու Յովակիմեան-Դարուհի Յակոբեան երկրորդական վարժարաններուն, յաջորդելով մեր օրերու Պր. Արա Թօփեանի անհաւասարելի տնօրէնութեան: Դանիելեան պատուաւոր կերպով կատարեց ուսուցչապետի իր պարտքը, մինչեւ իսկ Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հասցնելով իր մատենագիտական մեծ վաստակը: Դժբախտաբար յանկարծական վնաս կրեց եւ աչքերուն լոյսը կորսնցուց Պէյրութի անհեղ պայթիւմին հետեւանքով եւ Պոսթոնի փոխադրուելով դարմանումի ենթարկուեցաւ: Սակայն ափսոս հոյակապ հայասէր եւ հայագէտ ժիրայր կեանքէ հեռացաւ:

Բոլորիս համար այս երկու մեծանուն եւ սակայն ամենախոնարհ հայորդիներուն կորուստը համազգային է անտարակոյս: Կաղօթենք իրենց հանգիստին համար ընդ հովանեաւ ամենագուժ Տիրոջ արքայութեան երկնային լոյսերուն:

Հանրապետականներուն Մղձաւանջը

Շարունակուած էջ 1-էն

Երկու գլխաւորը այն է որ, Ներկայացուցիչներու Տան ունէ մէկ անդամը, իրաւունք պիտի ունենայ անվստահութեան քուէ պահանջելու խօսակցը փոխելու հարցով: Ծայրայեղները յաւելեալ տեղեր պիտի ստանան կարելու յաճճախումբերու վրայ եւայլն:

Եթէ այս գիշումները անհատներու կը վերաբերին, ապա մնացեալ հարցերը ուղղակի կապ ունին երկրի տնտեսական կայունութեան եւ ժողովուրդի առօրեային հետ: Ընդդիմադիրները իրաւունքներ ստացան խափանելու պիտուէտային օրակարգերը եւ կրճատումներ կատարելու անոր ծախսային բաժիններուն մէջ: Այդ կրճատումները իրագործելու համար պէտք է նուազեցնել ոչ միայն Փենթակոնի սպառագիւնութեան գումարները, այլեւ կենսաթոշակներն (Social Security) ու առողջապահութեան

նպաստները (Medicare):

Երկար բանակցութիւնները ետք ըմբոստներու խուճիկն պատկանող գոնկրեսականներու մեծ մասը փոխեցին իրենց դիրքորոշումը եւ 15-րդ քուէարկութեամբ Քէվին Մաքարթի ընտրուեցաւ Ներկայացուցիչներու Տան խօսակց, ոչ թէ 218 ձայնով այլ՝ 216, երբ 6 հոգի մնացին անդորդուելի, սակայն փոխանակ դէմ քուէարկելու ներկայ քուէարկեցին:

Ներկայացուցիչներու Տան մէջ պարզուած այս անցախընթաց երեւոյթը եկաւ ցոյց տալու որ, Հանրապետականները իրենց այս պառակտուած վիճակով անկարող պիտի ըլլան կառավարելու եւ երկրի առջեւ ծառայած խնդիրները լուծելու: Իսկ Քէվին Մաքարթի պիտի դառնայ թեւաթափ եղած տկար խօսակց մը ու այդպիսով մեծամասնութիւնը պիտի ապրի մղձաւանջի մէջ՝ երկու երկար տարիներ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

«Սփիւռքը Հայաստանի Դաշնակիցն է»

ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Վարդան Մարաշլեանը երիտասարդ տնտեսագետ է: Ծնած է Երեւան, ուսանած է Մոսկուայի պետական համալսարանի տնտեսագիտութեան բաժանմունքի մէջ, եւ ստացած է դոկտորական վկայական: Ան ներկայիս «Վերադարձ Հայաստան» հասարակական կազմակերպութեան գործադիր տնօրէնն է: Եթէ կը մտածէ, կը ծրագրէ ու կ'աշխատի հայրենադարձութեան տեսլականով բաց միեւնոյն ժամանակ գիտէ սփիւռքը եւ լաւ ճանչցած է զայն: Եթէ հասկցած է սփիւռքը բաց մանաւանդ ան կ'արժեւորէ անոր կարողականութիւնները: Վարդանը տեսած է սփիւռքին մտաւոր եւ մասնագիտական ներուժը, կը գիտակցի անոր եւ կ'արժեւորէ զայն: Ան չուզեցաւ ընելու իր կարեւոր մատնանշումը. «Սփիւռքը Հայաստանի դաշնակիցն է»: Ըստ բացատրական բառարանին, «դաշնակից» բառը կը բացատրուի որպէս «գինակից», «կողմնակից», «դաշինքով մէկու մը հետ կապուած», «ուխտակից», «համախոհ» եւ «համերաշխ»:

Վարդանը լաւ տեսած է սորված է տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակը՝ յատկապէս ներկայ օրերու բարդ ու կնճոտ կացութիւնները: Ան կը տեսնէ Հայաստանի դիրքը տարածաշրջանի եւ միջազգային իրադարձութիւններուն եւ անոնց քաշքշուքներուն մէջ եւ այս իրավիճակներէն մեկնելով ան հաստատ է իր համոզմունքներուն մէջ: Բայց քիչ մըն ալ աւելին. «Սփիւռքը Հայաստանի միակ դաշնակիցն է: Դաշնակիցի հասկացողութիւնը երկուստեք եւ փոխադարձ հասկացողութեան եւ փոխ ընթանումի վրայ պէտք է կայանայ», ըսաւ ան:

Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները ունին պատմական ենթահող:

Պատանեկան տարիներու՝ սովետական համակարգի ժամանակ, կը գործէր «սփիւռքահայութեան հետ մշակութային կապերի կոմիտէն», որ մշակութային, գրական, կրթական եւ գեղարուեստական հակադասական առաքելութիւն կը տածէր: Հայաստանի անկախութենէ ետք, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները շարունակուեցան Ափիւռքի նախարարութեան միջոցով: Նախարարութիւնը ունեցաւ լաւ գործունէութիւն եւ Հայաստան եւ Սփիւռք սկսան գիրար աւելի լաւ ճանչնալ: Ներկայիս նախարարութիւնը ստացած է յանձնակատարի կարգավիճակ եւ կայ աշխատանքը եւ երեւի որոնումը, թէ ինչպէ՞ս եւ ի՞նչ պիտակի տակ պիտի դնել Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները, ինչպէ՞ս ա՛լ աւելի լաւ պիտի ճանչնալ գիրար:

Կ'ապրինք մեր կեանքերը իրարմէ տարբեր եւ ունինք կենցաղային, մտածողութեան, գործելակերպի եւ ապրելակերպի տարբերութիւններ: Իսկ սփիւռքը ունի իր բարդութիւնները: Բարդ է իր կազմուածքով եւ մշակութային տարբերութիւններով: Սփիւռքի մէջ հայ ենք, իւրաքանչիւրս տարբեր ենք իրարմէ բայց օտար չենք: Իւրաքանչիւրս մէկ երկրի մը մէջ ծնած եւ մեծցած է եւ այս ալ մեր պատմութեան եւ անոր պատճառած աղէտներու հետեւանքն է: Բայց այս բոլորին առընթեր կայ միացնող օղակը: Սփիւռքը սփիւռքին, Հայ-

աստանի հետ, եւ Արցախի հետ: Եւ հակառակն ալ ճիշդ է:

Այս միացնող օղակը: Ծնած եւ մեծցած եմ հայրենասէր եւ հաւատացեալ ընտանիքի մը մէջ: Պատանեկան եւ երիտասարդական տարիներու, Հայաստանը սովետական համակարգի մէջ էր: Ընտանիքիս համար Հայաստան հայրենիք էր եւ վեր էր գոյնէ, կարգավիճակէ եւ դեկավարութենէ: Հայրենիքը եւ անոր մշակութային արժէքները մեր ինքնութիւնը կազմեցին, երբ յատկապէս Հայաստանէն արուեստագէտներ կուգային Պէյրութ եւ կը հմայէին մեզ իրենց ելոյթներով: Ու տակաւին ի՞նչ խօսք հայրենի Արարատ ֆութպոլի խումբը եւ անոր հերոս տղաքը: Անոնք դարձան մեր ազգային ինքնութիւնը կերտող տիպարներ: Այս բոլորը աւելիով ամրապնդուեցան երբ 1980-ին առաջին անգամ ըլլալով այցելեցի Հայաստան: Զբօսաշրջիկ էի եւ միայն այդքան: Այդ բոլորը որ սորված էի երբ կը մեծնայի սկսան ամրագրուիլ մէջս: Միայն այդքան: Պէտք էր սպասէի մինչեւ 1991 տարին, որպէսզի սորվէի ինչպէս կամրջմէ ինքնութիւնս Հայաստանի քոյրերուս եւ եղբայրներուս հետ:

1991-ին երբ սովետական համակարգը փուլ եկաւ, բոլոր այն երկիրները որոնք կը գտնուէին անոր մէջ, ներառեալ Հայաստանը, ստացան իրենց անկախութիւնը: Անկախութեան հետ սկսաւ արտասահմանեան արժէքներու եւ անոնց հմայքին հոսքը դէպի այս երկիրները: Միացեալ Աստուածաշունչի Ընկերութիւններու կողմէ դրկուեցայ որպէս խորհրդատու, հաստատելու Հայաստանի Աստուածաշունչի Ընկերութեան գրասենեակը:

Ճիշդ է, որ հայ ենք եւ հայերէն կը խօսինք բայց գիրար չէինք հասկնար: Արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի հարցը չէր: Կային մտածողութեան, կենցաղի ու աշխատանքային ոճի տարբերութիւններ: Անհրաժեշտ էր, որ գիտակցէի այս բոլոր տարբերութիւններուն եթէ պիտի յարմարուէի եւ աշխատանքը յաջողէր:

Ու տակաւին, այդ տարիները Հայաստանի համար շատ դժուար օրեր էին: Երկրաշարժ, պատերազմ, շրջափակում, եւ ելեկտրականութեան, հացի եւ քառիւղի տագնապ: Կարիքը կար համբերելու, գիջելու, եւ կամաց-կամաց ժամանակին առիթը տալու, որպէսզի հասկցուէինք իրարու հետ: Ժամանակը իր ներդրումը ունեցաւ: Ժամանակի ընթացքին տեսայ եւ տեսանք միասին մեր տարբերութիւնները, ապրեցայ եւ ապրեցանք միասին մեր դժուարութիւնները, եւ սորվեցայ եւ սորվեցանք միասին, թէ բոլորս հայ ենք՝ անկախ մեր տարբերութիւններուն եւ պայմաններուն: «Դաշնակից» բառը սկսաւ իր բոցնը շինել իմ մէջս եւ նաեւ գործընկերներուս մէջ:

Կեանքի փորձը ցոյց տուած է, թէ Հայաստանը լաւ ճանչնալու եւ ըմբռնելու համար պէտք է որ հանրային ինքնաշարժներու եւ անոնց վարիչներուն հետ գրուեցան: Արմէնը միջին տարիքի վարորդ մըն է որ գիտ պիտի տանէր Արշակունեաց փողոցէն մինչեւ Բաղրամեան: Նշմարեցի թէ անոր աստմները բշտուած էին: Չեմ գիտեր ինչպէս եւ արանց ամչնալու իրեն հարց տուի թէ ինչ պատահած

է իր աստմներուն: Արմէնին պատմութիւնը:

«Սովետական բանակին հետ կռուած եմ Աֆղանիստանի մէջ», ըսաւ Արմէն: «Ատկէ ետք արցախեան պատերազմներուն մասնակցած եմ 90-ական տարիներուն»:

Հոս սկսայ նշմարել Արմէնին դէմքին վրայ գծուած հպարտութիւնը: «Արցախի պատերազմին հարուած ստացայ եւ աղաներս փշրուեցան», ըսաւ Արմէն:

«Դուն ալ իրենց հատ մը չի խփեցի», հարցուցի Արմէնին, քիչ մը ծիծաղով եւ կատակի մթնոլորտի մէջ:

«Պա ոնց», եղաւ Արմէնին կտրուկ եւ վստահ պատասխանը:

Արմէնը ունի թիկնեղ եւ ամուր մարմին: Յայտնի էր, թէ գինուորական եղած էր եւ ունէր տոկուն կազմուածք: «Ամուսնացած եմ», հարցուցի Արմէնին:

«Վեց գաւակ ունիմ եւ երեք թոռնիկ», եղաւ Արմէնին ուրախ պատասխանը: Բայց ուրախութիւնը միայն դէմքին վրայ չէր: Կը գզգզի այդ ուրախութիւնը, որ կուգար իր ներսէն՝ սրտէն եւ հոգիէն: «Աշխատասէր մարդ ես եղեր, Արմէն», ըսի իրեն դարձեալ կատակով:

«Չորս մանչ գաւակ ունիմ եւ երկու աղջիկ», ըսաւ Արմէն: «Չորս տղաքս ալ մարմնակրթանքի կը հետեւին եւ տարբեր մարզաձեւերու մէջ են: Իսկ աղջիկներս ամուսնացած են եւ ունին երեք գաւակներ»:

Արմէն մէկ կողմէ ինքնաշարժը կը վարէր բայց իր բջիջային հեռախօսին մէջէն դուրս բերաւ իր գաւակներուն, թոռներուն եւ տիկ-

նոջը նկարները: Ուրախ է Արմէն, հպարտ եւ գոհունակ իր ընտանիքով եւ կեանքով եւ այդ բոլորը շատ ակներեւ էր երբ ցոյց կուտար նկարները:

«Ես իմ գործս որ կ'ընեմ, շատ կը սիրեմ: Իմ օրապահիկը կը վաստակիմ եւ ընտանիքիս հետ կ'ուրախանամ», գոհունակութեամբ եւ հոգեկան հանգստութեամբ ըսաւ Արմէն:

Հասայ Բաղրամեան: Արմէն գիտէր, թէ ես սփիւռքահայ եմ:

«Ես իմ հայրենիքը շատ կը սիրեմ», ըսաւ Արմէն: Կարծես ան ըսաւ այս խօսքը որպէս մնաք բարով: «Ուրախ եմ որ դուն հայրենիք եկած ես»:

«Ես ալ կը սիրեմ», ըսի Արմէնին:

Այս սիրոյ արտայայտութիւնը հայրենիքի նկատմամբ, մեր այդ օրուայ հաղորդակցութեան եւ խօսակցութեան միացնող օղակը եղաւ՝ սէրը հայրենիքին, որ Արմէն եւ ես փոխանակեցինք:

Դարձեալ Վարդանը: «Սփիւռքը Հայաստանի դաշնակիցն է»: Դաշնակիցը եւ դաշնակցութիւնը կ'ենթադրէ կապուածութիւն, համախոհութիւն, եւ համերաշխութիւն, եւ միացնող օղակը սէրն է: Այս այն սէրն է, որ երկայնամիտ է: Աստուածաշունչին մէջ «երկայնամիտ սէր» կ'ընդգրկէ լման կեանք: Կեանքը, որ կ'ապրիս, ոչ թէ միայն առանձին այլ հաւաքական իմաստով: Կ'ապրիս կեանքը միասին, գիրար հասկնալով, համբերելով եւ գիրար քաջալերելով: Երկայնամիտի բացատրութիւնը խորունկ է եւ խորքային:

Իրաքահայերու Շարաքօրեայ Վարժարան

Շարունակուած էջ 12-էն

ցիչներուն եւ տնօրէնութեան:

Ծնողները այնքան ուրախ եւ գոհ էին, որ ծաղկեփունջերով իրենց երախտագիտութիւնը կը յայտնէին ուսուցիչներուն եւ տնօրէնուհիին:

Վերջաւորութեան հասաւ փոքրիկներուն սպասած պահը իրենց հանդիպումը Ձմեռ պապիկին (կաղանդ պապային) հետ: Ներկաները երգով, ծափերով, բացազանչութիւններով շատ ջերմ մթնոլորտի մէջ դիմաւորեցին այս համովհոտով Ձմեռ պապին, որ ծանրաբեռնուած էր իր բերած նուէրներով, բոլոր աշակերտները առանձին-առանձին նկարուեցան, առանձին կամ ծնողներուն հետ, որմէ ետք սկսաւ դպրոցի ծնողաուսուցչական մարմնին կողմէ պատրաստուած եւ նուիրուած ճաշկերոյթը, որ աշակերտները հրաւիրուած էին

Սիրգոյեան Զեռախօսագրոյց Ունեցած է

Շարունակուած էջ 1-էն

ման ատրպէյճանական կողմին իբր բնապահպանական հիմնաւորումները եւ հնչող մեղադրանքները կեղծ են: Նախարար Միրզոյեան ընդգծած է, որ Ատրպէյճանը պարտաւոր է առանց որեւէ նախապայմանի վերականգնել Լաչինի մի-

ջանքի՝ Նոյեմբերի եռակողմ յայտարարութեամբ ամրագրուած կարգը:

ՀՀ արտաքին գործերու նախարարը գրուցակցին ներկայացուցած է նաեւ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին վերջին զարգացումները:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շարաքաթերթին
 Massis2@earthlink.net (626) 797-7680

Նոր Հրատարակութիւն Անսպառ Գիւտերու Աղբիւրը՝ ԱՆԻ



ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Քարը քարին վրայ դիզել: Այս եղաւ հայուն յատկանիշը: Բաբելոնէ այս կողմ, իւրաքանչիւր ժողովուրդ երկրագունդի վրայ գոյութիւնը նկարագրող յատկութիւնով մը ներկայացուց իր կոչումը: Ոմանց վիճակեցաւ կերտել, եւ ուրիշներուն ալ աւերել:

Կերտելու եւ աւերելու խաչմերուկին վրայ, հազարամեայ ողբ մըն է Անին: Երկնային արքայի գահը նուաճելու չար միտքով մեկնարկած էր Բաբելոնեան աշտարակի շինութիւնը: Է՛նթեան պատժի մարդկային փոխադարձն է Անին: Համաշխարային ճարտարապետութեան ներշնչման աղբիւրն է ան: Աղբիւր՝ որուն ջուրով յագեցան եւրոպական տարածքի վրայ կոթական ոճի ճարտարապետական կոթողները կառուցողները: Այդ աղբիւրի ջուրն էր, որ հասաւ Կոստադնուպոլիս, Սուրբ Սոփիայի գմբէթի կամարները կապելու:

Բանաստեղծական, երաժշտական, գեղանկարչական բազում ստեղծագործութիւններով հայը, հայավարի ու հայերէն ողբաց հայու միտքով ու ձեռքով կերտուած ու ապա որբացած Անիի տառապանքը:

Միւս կողմէ Անիի ձգողութեան տարուելու համար պայման չէ հայու ծագում ունենալ: Ան իր հրապոյրով կը հմայէ բոլոր անոնց, որոնք կը գիտակցին գեղեցիկին ու արժէքաւորին:

Այդպիսիներու շարքէն է Կարսեցի Վետադ Աքչայօզ, որ նուիրեալ աշխատանք կը վատնէ Անիի առեղծուածը բացայայտելու համար: Այո՛ առեղծուած մըն է Անին, թէ հողի երեսին տեսանելի սքանչագործութիւններով, եւ թէ ստորերկրեայ, գետնափոր քարանձաւներով: Կան վարկածներ, ըստ որում այդ գետնափոր քարանձաւները հատելով Ախուրեանի յատակը, կը հասնին գետի հանդիպակաց փիւն, որ կը մնայ Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ:

Վետադ Աքչայօզի վերջին ուսումնասիրութիւններու առանցքը կը կազմեն Անիի տաճարներու որմնանկարներու յայտնաբերումը: Ան՝ օգտուելով համակարգչային կարգ մը ծրագրիչներէ, յաջողած է նաեւ վերարտադրել մեծաւ մասամբ ոչնչացած որմնանկար-

ները: Թէ որմնանկարներու ենթադրական ամբողջութեան մօտենալու եւ թէ ստորերկրեայ քաղաքի մասին նոր յայտնաբերումներու ակնարկելով գիրքը կոչուած է «Անին՝ նոր գիւտերով»:

Բացի այդ, ստորերկրեայ առեղծուածային քաղաքի մասին իր կողմէ առնուած լուսանկարներով հարուստ այս ուսումնասիրութեան հրատարակութեան մեկենասը եղաւ Հայ ճարտարապետներու եւ ճարտարագէտներու «Հայձար» Միութիւնը: Արդարեւ «Ակօս» տուած այցելութեան պահուն, հեղինակին կ'ընկերակցէին ճարտարապետներ, «Հայձար»ի ատենապետուհի Կիւլիզար Արթուրէ եւ նախորդ շրջանի ատենապետ Գէորգ Էօզգարակչօզ:

Արթուրէ եւ Էօզգարակչօզ, Պալեաններու նախագիծները նիւթ առնող, այդ ոլորտի մէջ բոլորովին նոր գիտելիքներ ներկայացնող հատորի հրատարակութեան էտք, մեծ գոհունակութիւն կ'ապրէին Աքչայօզի գիրքին մեկենասութեամբ: Անոնք այս հրատարակութիւնները կը բնութագրէին իրենց միութեան հասարակական ծառայութեան օրինակներ ըլլալով:

Արհեստավարժներու կազմած միութիւնները իրենց նպատակ կը դնեն երկու ուղիներ: Առաջինը, նոյն կամ նման արուեստներով զբաղողներու միջեւ զօրակցութիւնն է: Իսկ երկրորդը, անոնց հասարակութեան հանդէպ պատասխանատուութեան պահանջած ծառայութիւնը: Այս երկրորդի շնորհիւ անոնք կը կոչուին հասարակական կազմակերպութիւն:

Մեր սեղանին դրուած է պատուաբեր աշխատասիրութիւն մը, որ կու գայ աւելնալու Անիի ձօնուած գրականութեան հսկայ պաշարին վրայ, նոր գերազանցութիւն մը ըլլալով: Նոր գերազանցութիւն մը, քանի ան նոր ուղիներ բանալու կարողութիւն ունի ապագայի հետազոտիչներու համար: Մեզի կը մնայ շնորհաւորել մեր վաղեմի բարեկամ Վետաթ Աքչայօզը, իր այս թանկարժէք ուսումնասիրութեան համար: Նոյնպէս շնորհաւորելու արժանի է «Հայձար» միութիւնը, նման աշխատութիւնը խրախուսող գիտակցութեան առումով:

«ԱԿՕՍ»

«Alpha Metal». Իրանահայ Ընկերները Հայրենիքի Մէջ Բացած ԵՆ Երկաթագործական Արհեստանոց



«Այս նմուշը մի քանի ամիս առաջ պատրաստած ենք: Այս մէկը գիւղատնտեսական մեքենաներու մէջ կ'օգտագործեն: Խոտ հնձելու համար է», - ըսաւ հայրենադարձը:

Հայկական արտադրութեան մատնաշար՝ նախատեսուած գիւղատնտեսական մեքենաներու համար: Հայրենադարձ ընկերներ չենօս եւ վահանը հայրենիքի մէջ բացած են երկաթագործական արհեստանոց մը:

«Մեր գործը թիթեղներու հետ է: Կ'աշխատինք նաեւ պողպատեայ խողովակներու հետ: Բերած ենք «SNS» սարքաւորումներ, բոլորովին նոր: Մինչեւ 10 միլիմետր հաստութիւնը դիւրութեամբ կը կտրենք, տարբեր զօդումներ կ'ընենք: Նաեւ փոշեներկում», - ըսաւ Հենօ Մուսախանեանը:

Թեհրանի մէջ ապրող դրացիները ժամանակի ընթացքին դարձան ընկերներ, հիմա ալ՝ գործընկերութեան սկիզբը դրած են: Հենօ Մուսախանեանը մասնագիտութեամբ մեքենական ճարտարապետ է: Ան իրանի մէջ երկար տարիներ զբաղած է տարբարանական նիւթերու արտադրութեամբ: Երկաթագործութեան ոլորտին ներս սկսնակ է, սակայն օգնութեամբ իր ընկերով՝ Վահանին, որ արդէն 25 տարի է, որ ոլորտին մէջ է, վստահ է, որ պիտի յաջողին:

«Մեր այս գործը հայրիկէս սորված եմ: Անոնք տարիներ շարունակ այդ գործով կը զբաղէին: Ես շատ փոքր տարիքէս աշխատած եմ իրենց հետ, յետոյ արդեն գացած եմ ուսանելու եւ գործը շարունակելու», - ըսաւ Վահան Պաղտասարեանը:

Վահան Պաղտասարեանն ալ եռաչափ՝ 3D ձեւաւորող է:

Արարատ Միրզոյեան Հեռախօսագրոյց

Շարունակուած էջ 2-էն

րող լինել բազմաթեւ կամ բազմաբեւեռ, այն չունի այդօրինակ բնոյթով համակարգի համար անհրաժեշտ ռեսուրսային բազա՝ բոլոր առումներով: Ըստ այդմ, բազմաբեւեռութիւնը աներկբայօրէն լինելու է մսխող տրամաբանութեան մէջ: Այլ կերպ ասած, էֆեկտիւութիւնը պահանջում է ամբողջական, հաւաքական իշխանութեան կառուցուածք:

Միւս կողմից սակայն, այդպիսի կառուցուածքով իշխանութիւնն ինքնին չի կարող երաշխաւորել որակ եւ արդիականութիւն: Հետեւաբար, իշխանութեան կառուցուածքի փոփոխութիւնը աներկբայ պէտք է ուղեկցուի նաեւ որակական եւ արժեհամակարգային սերնդափոխութեամբ, ինչը կը վկայի, որ դրուած եւ լուծուած է ոչ միայն պարզապէս իշխանութեան, այլ նաեւ Արցախի ապագայի հարց: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ոչ Եւս Է Անդրանիկ Սիմանեան
Խոր ցաւով վերահասու եղանք, որ Յունուար 3-ին, 2023 իր մահականացուն կնքած է զաղութիս ծանօթ անձնաւորութիւններէն Անդրանիկ Սիմանեան: Այս տխուր առիթով՝ մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին՝ Տիկ. Արփիին, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար եղբօր՝ Տէր եւ Տիկ. Սիման եւ Անժէլ Սիմանեաններուն: «Մասիս»ի Խմբագրութիւն

ՅԱԻԱԿՑԱԿԱՆ
ՍԱՐԳԻՍ-ՍԹԻՎ-ԳԱԼԲԱԳԵԱՆԻ անժամանակ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի տիկնոջ, մօր եւ համայն հարազատներուն, մասնաւորաբար Հայ Ամերիկեան Թանգարանի հոգաբարձութեան գործադիր նախագահ՝ Տէր եւ Տիկ. Պերճ եւ Մարի Կարապետեանին:

«Նափոլին» Յաղթեց Եւ Ամրապնդեց Առաջին Տեղը

Իտալիոյ առաջնութեան 17-րդ հանգրուանին առաջատար «Նափոլին» հիւրընկալեց «Սամպորիային»:
Իտալացի Լուչանո Սպալետիի գլխավորած խումբը յաղթանակի տարաւ 2:0 արդիւնքով:
«Նապոլիէն» աչքի ինկան նիճերիացի յարձակող Վիկտոր Օսիմէնը եւ մակեդոնացի կիսապաշտպան Էլիֆ Էլմասը:
«Նափոլին» 44 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 7 կէտ առաջ է երկրորդ տեղը ընթացող «Եուվենտուսէն»:

«Ինթեր» Վերջին Վայրկեանին Կորսնցուց Յաղթանակը

Իտալիոյ Ա. Սերիայի 17-րդ հանգրուանի խաղին «Ինթերը» հիւրընկալելով հաւասարած է «Մոնցայի» հետ՝ 2:2 արդիւնքով:
Միլանեան ակումբը երկու անգամ առաջ անցնելէ ետք, հաւասարութեան երկրորդ կողմը ստացած է աւելացուած 90+3-րդ վայրկեանին:
«Ինթեր» խումբէն հանդէս եկող Հայաստանի ֆութպոլիստ Հենրիխ Մխիթարեանը մասնակցեցած է ամբողջ խաղին: Ան 71-րդ վայրկեանին դեղին քարտ ստացած է:
16-րդ հանգրուանի «Ինթերը» սեփական յարկի տակ ընդունած էր մրցաշարային աղիւսակի առաջատար «Նափոլին»-ին եւ յաղթանակի հասած՝ 1:0 արդիւնքով:
«Ինթեր» 34 կէտով չորրորդն է եւ 2 կէտ ետ է երրորդ տեղը գտնուող ախոյեան «Միլանէն», որ մէկ խաղ նուազ կատարած է:



«Պարսելոնան» Ուժեղ Եր Մատրիտի «Աթլետիքոյէն»

Սպանիոյ առաջնութեան 16-րդ հանգրուանին փոխախոյեան «Պարսելոնան» Մատրիտի մէջ մրցեցաւ «Աթլետիքոյէն» հետ: Սպանացի Չաւիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:
22-րդ վայրկեանին աչքի ինկաւ ֆրանսացի յարձակող Ուսման Տեմպելէն, որուն կողային փոխանցում կատարեց սպանացի կիսապաշտպան Կալին:
«Պարսելոնան» 41 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 3 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Մատրիտի «Ռեալէն»:
«Աթլետիքոյէն» 5-րդն է՝ 27 կէտ:

Պենզեման Կրկնեց Դի Ստեֆանոյի Ցուցանիշը

Մատրիտի «Ռեալի» ֆրանսացի յարձակող Քարիմ Պենզեման հաւասարեցաւ Արքայական խումբի նախկին խաղցող Ալֆրետո Դի Ստեֆանոյին Սպանիոյ առաջնութեան ընթացքին նշանակած կողերու քանակով:
«Վիլյառեալի» դէմ խաղին 11-մեթրանոցէն նշանակած կողը 227-րդն էր Պենզեմայի համար Լա Լիգայի մէջ: 228 կող նշանակած է «Ռեալի» նախկին յարձակող Ռաուլը: Աւելի բարձր ցուցանիշ ունին Հուկո Սանչէզը՝ 234 կող, Տելմո Սաուան՝ 251, Կրիշտիանու Ռոնալտուն՝ 311, Լիոնել Մեսին՝ 472 կող:
Յիշեցնենք, որ «Ռեալը» «Վիլյառեալին» պարտուած էր 1:2 արդիւնքով:

Խոսեպ Կուարտիլան Մերժած Է Պրագիլի Հաւաքականին

«Մանչեսթըր Սիթիի» սպանացի գլխավոր մարզիչ Խոսեպ Կուարտիլան հրաժարած է գլխավորել Պրագիլի հաւաքականը:
Պրագիլի ֆութպոլի ֆետերացիան նախնական հարցում կատարած է մարզչի գործակալին եւ եղբօրը՝ Փերէ Կուարտիլային, որպէսզի տեսնէ՝ արդեօք անուանի մասնագէտը հետաքրքրուած է հարաւամերիկեան հաւաքականին հետ աշխատելու հարցով: Խոսեպ Կուարտիլան մերժած է այդ առաջարկը՝ ըսելով, որ կը կ'ուզէ շարունակել «Մանչեսթըր Սիթիի» հետ:
Աշխարհի Բաժակէն յետոյ Պրագիլի հաւաքականի գլխավոր մարզչ Տիտէն լքած է իր պաշտօնը: Պրագիլի ֆութպոլի ֆետերացիան հաւաքականի գլխավոր մարզչի թեկնածուներու թուին կը դասէ նաեւ Զինետին Զիտանն ու Ժոզէ Մուուրիչիոն, սակայն անոնք նոյնպէս հրաժարած են գլխավորել աշխարհի նախկին ախոյեանին:

Երեւանի Սեջ Ապրիլին Կը Կայանայ Բռնցքամարտի Եւրոպայի Երիտասարդներու Առաջնութիւնը

Երեւանը ընթացիկ տարուայ Ապրիլին կ'ընդունի բռնցքամարտի Եւրոպայի երիտասարդներու առաջնութիւնը:
Հայաստանի բռնցքամարտի ֆետերացիան մրցաշարը կազմակերպելու յայտը շահած է Խորուաթիայի եւ Մակեդոնիայի ֆետերացիաներու հետ պայքարին:
2022-ին Երեւանը ընդունած էր մեծահասակներու Եւրոպայի առաջնութիւնը, որը միջազգային մասնագէտներու կողմէ որակուեցաւ լաւագոյնը մարզաձեւի պատմութեան մէջ:



Վան Բաստենը Նշած Է Բոլոր Ժամանակներու 3 Լաւագոյն Ֆուլպոլիստներուն



Հոլանտայի հաւաքականի, «Այաքսի» եւ «Միլանի» նախկին յարձակող Մարկո վան Բաստենը նշած է բոլոր ժամանակներու երեք լաւագոյն ֆութպոլիստներու իր տարբերակը:
«Ֆութպոլի պատմութեան մէջ լաւագոյններն են Փելէն, Մարատոնան եւ Քրոյֆը: Բայց ես չեմ մոռնար նաեւ Ռոնալտուի, Փլաթինիի կամ Զիտանի մասին:
Մեսին նոյնպէս գերազանց խաղցող է, սակայն Մարատոնան խումբին մէջ միշտ ունեցած է աւելի մեծ ազդեցութիւն եւ քարիզմա: Մեսին ճակատամարտի նետուողներէն չէ», - վան Բաստենի խօսքը կը մէջբերէ France Football-ը:
35 տարեկան Մեսին 2014թ. աշխարհի փոխախոյեան է, 2022թ. աշխարհի ախոյեան: Երկու առաջնութիւններուն ալ ան արժանացած է լաւագոյն խաղցողի «Ոսկէ գնդակին» եւ այդ ցուցանիշով միակն է պատմութեան մէջ:

«Մանչեսթըր Սիթին» Դուրս Չգեց «Չելսիին»՝ 4:0

Անգլիոյ գաւաթի խաղարկութեան 1/32 եզրափակիչին ախոյեան «Մանչեսթըր Սիթին» ընդունեց Լոնտոնի «Չելսիին»: Քաթալոնացի Խոսեպ Կուարտիլայի գլխավորած խումբը յաղթեց 4:0 արդիւնքով:
Դուբլի հեղինակ դարձաւ ալճիրցի յարձակող Ռիչարդ Մահրեզը, աչքի ինկան նաեւ արժենթինացի յարձակող Խուսէյն Ալվարեսը եւ անգլիացի կիսապաշտպան Ֆիլ Ֆոդենը:
«Մանչեսթըր Սիթին» դուրս եկաւ 1/16 եզրափակիչ:

Տիտիէ Տեշամը Մինչեւ 2026 Թուականը Կը Գլխավորէ Ֆրանսայի Ազգային Հաւաքականը

Ֆրանսայի ֆութպոլի ազգային հաւաքականի գլխավոր մարզիչ Տիտիէ Տեշամը իր այդ պաշտօնին պիտի մնայ մինչեւ 2026 թուականը:
Տիտիէ Տեշամը Ֆրանսայի ազգային հաւաքականը կը գլխավորէ 2012 թուականէն սկսեալ: Հաւաքականի ղեկին Տեշամն կատարած է 139 խաղ, որոնցմէ 89 խաղերու ընթացքին յաղթած է, 28ը հաւասար եւ 22 խաղերու ընթացքին՝ պարտուած:
Ֆրանսայի հաւաքականը Տեշամի գլխավորութեամբ նուաճած է 2018 թուականի Աշխարհի Բաժակը, 2021 թուականին Եւրոպայի Ազգերու Լիգայի գաւաթը:

